№ 164 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՅՈՒԼԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՅՈՒԼԻՍԻ № 164

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն՛ լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
5 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սրանով ոչնչացնում ենք այս տարվայ յունիսի 16-ին **ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԴԱԼԵԱՆՑԻՆ** տուած հաւատարմաթուղթը և յայտնում ենք ի գիտութիւն մեր կլիենտների, որ նա այլևս ներկայացուցիչ չէ մեր ֆիրմային։
ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Թայիրով, Ալիխանով և Տօլլէ"

(տռ) 876. 1—1



ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
Այսօր, հինգշաբթի, յուլիսի 29-ին
12-րդ օր ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ
ԿԸՄԲՇԱՄԱՐՏԵՆ 5 ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶՈՅԳԵՐ.
I զոյգ՝ ՆԱՃԻ—ՎԱՆ-ՌՕՏԷՆ։ II զոյգ՝ ամերիկական ըմբշամարտ «Կէչ-Կէն» ՄԻԽԻԼ-ՄԱՅԵՐ—ԲԵՐՆԷԿԱԴՕ։ III զոյգ՝ ՊԵՏՐՈՍ—ՄԱՏԻՐՃԷՆԿՕ։ IV զոյգ՝ ԱՊՕԼՕՆ—ՐԷՅՆԻՐ։ V զոյգ՝ ՎԱԼՏԵՐ—ՀԱՍԱՅ ՄԱԽՕՎ։
Նախ քան ըմբշամարտը սկսվելը՝ երեկոյեան ժամը 9-ից— **ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ**։ Ըմբշամարտի սկիզբը երեկ. ժ. 10½-ին։ Գները մատչելի են (30 կ. մինչև ր.)։
Այգում նուագում է կանանց երաժշտախումբը։ Կայ փառահեղ խոհանոց։

(տռ.) 878. 0—1

ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԵԼ

II

Թէ ռուսահայը և թէ թիւրքահայը ներկայումս պահանջ են զգացել բարձրացնելու ժողովրդական մասսաների աշխատանքի դրութիւնը, բարւոքելու երկրագործական արհեստի վիճակը։

Արհեստի կատարելագործութիւն—ահա այն ընդհանուր պահանջը, որ դրված է հրապարակի վրա։

Տնտեսութեան խելացի կազմակերպութիւն—ահա այն խնդիրը, որ դըրված է գրական լուծման համար։

Արդարև անմխիթարական վիճակի մէջ է ժողովրդի 90%-ի արհեստը։

Եթէ հնար ունենանք բարւոքելու այդ արհեստը, մենք միլիօններ կը տանք ժողովրդին։ Եթէ գիւղատնտեսական դպրոցներ, փորձադաշտեր, ցուցադաշտեր, արհեստանոցներ հիմնելով մենք աւելացնենք հողի արդիւնաբերութիւնը, մենք նոր հարստութիւններ կը տանք ժողովրդի ձեռքը, որով նա իրան կը կերակրի, կը պահպանի իր դպրոցները և կուլտուրական հաստատութիւնները։

Ներկայ տարվայ առաջին կիսում մեր ինտելիգենցիայի շրջանում խոսակցութիւններ եղան մի քանի ծրագիրների մասին, որոնց իրագործութիւնը սպասվում է ապագայում։

Ծրագիրներից առանձին ուշադրութիւն գրաւեցին՝ 1) Դաւթեան ժառանգների գիւղատնտեսական փորձադաշտի, 2) Մանթաշեան գիւղատնտեսական դպրոցի, 3) Վարազի գիւղատնտեսական ագարակի և կրթարանի ծրագիրները։

Ե՛րբ կիրագործվեն այդ ծրագիրները յայտնի չէ. բայց նրանց հաստատելու պահանջը այնքան մեծ է և հասարակական կարծիքը այնքան հրամայողական է դարձել այդ գործի նըկատմամբ, որ պէտք է յուսալ, թէ շուտով կը ձեռնարկվի գործնական միջոցների։

Որոշ դեր կատարել են անշուշտ և պէտք է կատարեն այնպիսի ժամանակաւոր դասընթացքներ, ինչպէս են ամառային դասընթացքները Ղարաքիլիսայում, մեղուաբուծական-շերամապահական դասընթացքները Թիֆլիսում, գործնական պարապմունքները զանազան տնտեսութիւնների մէջ։

Ցանկալի է, որ առաջիկայ տարում հաստատվէր իբրև նախափորձ գիւղատնտեսական դասընթացք կամ Ներսիսեան դպրոցում, կամ Գէորգեան ճեմարանում և կամ գաւառական քաղաքներից մէկում, օրինակ՝ Ալէքսանդրոպոլում, ցանկացողների որոշ խմբի համար։ Իսկ ամառը կարելի էր կազմակերպել գործնական պարապմունքներ, որոնք կը լրացնէին և կարդինաւորէին տեսական դասաւանդութիւնը։

Ամառային դասընթացքների փորձը ցոյց է տալիս, որ կարելի է գործել այդ ուղղութեամբ և հասնել թէև դեռ ոչ շատ մեծ, այնուամենայնիւ դրական հետևանքների։

Պէտք է յուսալ, որ առաջիկայ ձմեռվայ ընթացքում բաւականաչափ կը մշակվեն գիւղատնտեսական կրթութեան և ղեկավարութեան հարցերը և առաջին քայլեր կանեն վերածելու նրանց գործնական ձեռնարկութիւնների։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 27 յուլիսի

Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան և թագուհի Ալէքսանդրան Բուգինհեմեան պալատից գնացել են Սենդրինհէմ։ Նոցին Մեծութիւններին ողջունել է ահագին ամբոխը։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 27 յուլիսի

Բարձրագոյն հրամանով Պետական Դումայի անդամ Գուչկովի չորս շաբաթվայ բանտարկութիւնը դարձվել է մի շաբաթ։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 27 յուլիսի

Նիւ-Եօրկի քաղաքագլուխ Գէյնօրի վրա յարձակում է կատարվել «Կայսր Վիլհէլմ մեծ» նաւի վրա, որը գնում էր Եւրոպա։ Գէյնօրը վիրաւորվել է պարանոցից։ Նա մտադիր է եղել ճանապարհորդել Հիւսիսային Եւրոպայում։ Յանցաւորը եղել է քաղաքային նաւահանգստի վարչութեան ղռնապանը։ (Հ. Գ.)

Լոնդոն, 26 յուլիսի

Րէյտէրին հաղորդում են, որ երէկ ցերեկով Պորտսմուտ ժամանեցին եապօնական կրէյսեր «Իկոմա» և ռուսական չորս նաւերից բաղկացած էսկադրան։ Սրտագին ողջունվեցին ցամաք եկած ռուս օֆիցերները։ Երեկոյեան Պորտսմուտի նախկին բուրգոմիստրը բանկէտ սարքեց ի պատիւ եապօնական օֆիցերների, ուր ռուս օֆիցերները ուղարկեցին երկու շքեղ ծաղկեփունջ ի նշան յարգանքի դէպի եապօնական ընկերները։ Արտասանված բաժակաճառի մէջ պրինց Տօկուհամա յիշեց բարեկամական զգացմունքների այդ արտայայտութեան մասին և ասաց, որ երէկվայ թշնամին այսօրվայ բարեկամը դարձաւ։ (Հ. Գ.)

Սան-Սեբաստիան, 26 յուլիսի

Նաւարայի, Բիսկայի, Ալավայի, Գիպուսկօյի գաւառների խնտերը վճռեցին շարունակել պրօպագանդան ամբողջ Սպանիայի մէջ և խնտաներ կազմակերպել ի պաշտպանութիւն կաթոլիկութեան։ Ընտրված է ընդհանուր խորհուրդ մեծ ցոյցի կազմակերպութեան համար կառավարութեան դէմ։ Չորս նահանգների սենատօրները և պատգամաւորները որոշեցին պահանջել բանտարկվածների ազատութիւնը։ Առ այժմ այստեղ ազատված են 55 հոգի, մնում են կալանաւորված 77 հոգի։ (Հ. Գ.)

Փոքրիկ Չեռնոգորիան իր 200,000 բնակչութեամբ ներկայում տօնում է իշխան Նիկոլայի կառավարչութեան 50-ամեայ յօբելեանը։ Իշխան Նիկոլայը յաջորդեց իր հօրեղբայր Դանիլօ I Նեգօշին, որը 1860 թւականին սպանվեց վրէժխնդրութեամբ իր հպատակի ձեռքով։ Տօնական հանդէսները սկսվելու են ամսիս 26 ին, իսկ կարճ ժամանակից յետոյ Ցետինէ մայրաքաղաքում կայանալու է իշխանի թագադրութիւնը՝ Չեռնոգորիայի թագաւորի կոչմամբ։

ԹԻՒՐՔ. ԲՕԼԳԱՐԱԿԱՆ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Սօֆիա, 27 յուլիսի

Բօլգարական հեռագրական գործակալութիւնը բերում է հետևեալ յօդուածը, որ տպված է «Պրէպօրեց» լրագրում թիւրքական և բօլգարական մամուլի միջև շարունակվող վէճի առիթով զինաթափութեան թիւրքական քաղաքականութեան հարցի մասին։ Բօլգարիան բարեկամական քայլեր արաւ, իսկ Թիւրքիան փորձ փորձեց դիմել խորամանկութիւնների և Լոնդոնի իր դեսպանութեան միջոցով նորերս հրատարակեց հաղորդագրութիւն, որով հրաւիրում էր անգլիական հասարակութեանը՝ հաւատ չընծայել այն տեղեկութիւններին, որ թիւրքերը խստասիրտ կերպով են վարվում բօլգարական ազգաբնակութեան հետ Մակեդօնիայում։ Բօլգարական միսիան պարտաւոր էր դրան առարկել։ Մենք պնդում ենք, որ թիւրք կառավարութեան օրգանները դիմում են բռնութիւնների և և խստութիւնների։ Թիւրքերը հերքում են, բայց հաստատող փաստերը բազմապատկվում են, փախստականների կոյտը մեծանում է, մենք ականատես ենք դառնում նրանց արտասուքներին և վէրքերին։ Թիւրք մամուլը փակում է դրա վրա իր աչքերը, յամառութեամբ չէ ընդունում իրականութիւնը, մեղադրում է մեզ ստութիւնների և բամբասանքների մէջ։ Ի՞նչպէս լոյս կը սփռել այդ գործի վրա, որ այնքան անհրաժեշտ է՝ լուծելու խտացրած օդը երկու կողմերի միջև։ Միակ միջոցն է անկողմնապահ քննութիւնը, որ կը կատարէ Անգլիան կամ մի ուրիշ պետութիւն կամ բոլոր պետութիւնները միասին։ Եթէ քննութիւնը չը հաստատի թիւրքերի գազանային վերաբերմունքը Մակեդօնիայում, այն ժամանակ մենք պարտաւոր կը լինենք և այժմ արդէն համաձայն ենք ընդունելու մեր սխալը և ներողութիւն ենք խնդրում մեր հիւրերի առաջ. բայց եթէ քննութիւնը կը հաստատի մեր մեղադրանքների արդարութիւնը, այն ժամանակ թող Թիւրքիան պարտաւորվի մեղաւոր ճանաչել զինաթափութեան իր վարչական օրգանները։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պոլիս, 27 յուլիսի

Տիեզերական պատրիարքութիւնը որոշեց գումարել ազգային ժողով՝ եկեղեցիների դաստւորութեան օրէնքը քննելու համար։ Արդարադատութեան և կրօնների մինիստրը մերժեց ընդունել այդ որոշման վերաբերեալ ծանուցումը և յայտնեց, որ կառավարութիւնը թոյլ չի տայ ժողով։ Սպասվում է պատրիարքի և պատրիարքական խորհրդի հրաժարականը։ (Հ. Գ.)

Ուրմիա, 27 յուլիսի

Թիւրքերի կողմից Ուրբանեան բարձրութիւնը գրաւելուց յետոյ՝ Ջուլֆա, Ուրմիա և Սալմաստ գնացող և վերադարձող կարաւանների երթևեկութեան համար ստեղծվել է վտանգաւոր դրութիւն։ Ռուսական մի մեծ կարաւան կողոպուտի է ենթարկվել քիւրդերի կողմից։ (Հ. Գ.)

Կ. Պոլսից եկած մի արժանահաւատ պարոնի պատմելով ամսիս 25-ին, կիրակի օրը, Կ. Պոլսի մի քանի եկեղեցիներում պէտք է միտինգներ տեղի ունենային։ Սպասվում էր բռնի միջամտութիւն և ընդդիմութիւն։ Յեղափոխական կուսակցութիւնները որոշած են ամեն միջոցներով կռուել հոգևոր իշխանութեան արգելող կարգադրութեան դէմ։

Ալէքսանդրիայի հայոց եկեղեցում ես անկարգութիւններ են եղել բանախօսու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

XVIII ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

I

Ստոկհոլմ, 18/31 յուլիսի

Առ այժմ մի կողմը թողնելով իմ ուղևորական նամակները Շուէդիայից, ես պէտք է սկսեմ նկարագրել խաղաղութեան համաշխարհային XVIII կօնգրէսը, որի նախատօնէքը կատարվեց այսօր Ստոկհոլմի բոլոր եկեղեցիներում և հրէական սինագօգներում։

Այս 18-րդ անգամն է, որ խաղաղութեան բարեկամները կամ խաղաղասէրները (պացիֆիստները) հաւաքվում են երկրագնդիս զանազան վայրերից՝ կատարելու մտքերի փոխանակութիւն, հաստատելու մարդկային համերաշխութեան կապեր զանազան ցեղերի և ազգերի միջև և քարոզելու, տարածելու խաղաղասիրութեան գաղափարը, համատարած անելու այն իդէան, թէ պատերազմի փոխարէն պէտք է հաստատել միջազգային դատարաններ, իրաւական ատեաններ, որովհետև ինչպէս այսօր մասնաւոր անհատների միջև ծագած վէճերը և կռիւները կարգաւորվում և լուծվում են դատարանների միջոցով, նոյնը և զանազան պետութիւնների և երկիրների միջև ծագած վէճերը և կռիւները կարող են լուծվել միջազգային դատարանների միջոցով։

Ներկայ կօնգրէսին մասնակցելու իրաւունք ունեն բոլոր երկիրների խաղաղասիրական ընկերութիւնների և կամ խաղաղասիրութիւնը նպատակ ունեցող լուսաւորական ընկերութիւնների պատգամաւորները և ներկայացուցիչները, ինչպէս և խաղաղասիրական ծրագիր ունեցող մամուլի օրգանների ներկայացուցիչները։ Ներկայացուցիչներ և պատգամաւորներ եկել են Գերմանիայից, Աւստրիայից, Բէլգիայից, Դանիմարքից, Սպանիայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Մեծ-Բրիտանիայից, Ունգարիայից, Իտալիայից, Նորվէգիայից, Շուէդիայից, Հոլլանդիայից, Լեհաստանից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Շվէյցարիայից, Ամերիկայից, Չինաստանից և Աւստրալիայից։ Ամենից շատ ներկայացուցիչներ տուել է ինքը Շուէդիան, ապա Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան։ Շատ քիչ են Ռուսաստանի ներկայացուցիչները, և դա ևս հասկանալի է։ Ռուսաստանում միայն անցեալ տարի կազմվեց (Մոսկվայում) խաղաղասիրական մի ընկերութիւն, որ ունի մի ճիւղ Պետերբուրգում, մինչ միւս երկիրներում տասնեակ տարիներից ի վեր գործում են բազմաթիւ խաղաղասիրական ընկերութիւններ։ Ռուսաստանից, այն է Մոսկվայից և Պետերբուրգից, իբրև ներկայացուցիչներ ծանուցված են իշխան Պաւել Դոլգորուկին, Դումայի անդամ Եֆրեմօվ, Ալէքսանդր Լէդնիցկի, տիկին Ունկօվսկայա և դօքտօր Ե. Սեմենօվ, բայց դեռ չեն եկել։ Կովկասից մասնակցում եմ միայն ես, իբրև «Արօրի» խմբագիր և անդամ ֆրանսիական «Association de la Paix par le Droit» ընկերութեան։

Այս երրորդ անգամն է, որ ես անձամբ մասնակցում եմ խաղաղութեան համաշխարհային կօնգրէսներին։ Առաջին երկու կօնգրէսներում (Փարիզում 1900 թ. և Գլասկովում՝ 1901 թ.) ես պաշտպանում էի հայկական հարցը, որի համար իմ ներկայացրած զեկուցագրերը այդ կօնգրէսները քննելով՝ կայացրին որոշումներ և հաղորդեցին Բեռլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւններին, իբրև խաղաղութեան կօնգրէսների որոշումներ և միջնորդութիւններ։ Ներկայ կօնգրէսում այլ ևս չը կայ հայկական հարց պաշտպանելու, բայց ես այնուամենայնիւ անհրաժեշտ եմ գտնում հայերի համար խաղաղասիրական կօնգրէսներին և առհասարակ խաղաղասիրական շարժման մասնակցելը, որովհետև այդ շարժումը՝ իբրև եւրոպական մտքի մի լայն արտայայտութիւն՝ ահագին ծաւալ է գտնում հետզհետէ ամբողջ երկրագնդի վրա, իբրև հակակշիռ միլիտարիզմի, իբրև մի ապաւէն, որի վրա յենվել կարող են փոքր ազգութիւնները իրանց ազգային և մարդկային իրաւունքների պաշտպանութեան համար հզօր և բռնակալ երկիրների ճնշումների դէմ։ Ճիշդ է, խաղաղասիրական շարժումը շատ մտածողների կողմից ծաղրի է ենթարկվում, գլխաւորապէս նրանց կողմից, որոնք կարծում են թէ «la force prime le droit» (ոյժը ճնշում է իրաւունքը), բայց, անկասկած, ապագան նրան է պատկանում և նա է լինելու ապագայում ժողովուրդների և պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները կանոնաւորող և կարգադրող մեծ ոյժը, որ, այսօր, հանդիսանում է պատերազմը։

«Քննեցէք ամբողջ պատմութիւնը,—ասաց ինձ յայտնի իտալական գործիչ և գրող ծերունի պրոֆ. Անջէլօ դը-Գուբերնատիս, որ նոյնպէս, իբրև խաղաղասիրութեան վաղեմի ախոյեան, Հռոմից եկել է մասնակցելու կօնգրէսին,—և դուք կը տեսնէք, որ պատերազմները միշտ ցանկացել և առաջ են բերել իշխանները, իսկ ժողովուրդները միշտ խաղաղութիւն են ցանկացել. երբէք ոչ մի ժողովուրդ չէ ցանկացել և ձգտել՝ անցնել իր սահմանը և նուաճել օտարի հողը, այլ ամեն մի ժողովուրդ աշխատել է մնալ իր հողի վրա և մշակել նրան. մի՞թէ երբևիցէ հայ ժողովուրդը, հայ երկրագործը ձգտում է ցոյց տուել թողնել իր սեփական հողը և գնալ մշակել օտարի հողը. ոչ, նուաճումները միշտ իշխանների ձեռնարկութիւնն են եղել»։

Բայց անցնենք կօնգրէսին։

Կօնգրէսի բացումը տեղի է ունենալու վաղը, օգոստոսի 1-ին (ն. տ.), և տևելու է 5 օր, մինչև օգոստոսի 5-ը, իսկ 6-ին, 7-ին և 8-ին կօնգրէսի անդամները մի պտոյտ պէտք է գործեն Շուէդիայում։ Կօնգրէսի օրակարգը, որ մշակել է Բեռնի միջազգային բիւրօն, հետևեալն է. 1) Բիւրօյի զեկուցագիրը տարվայ այն դէպքերի մասին, որոնք կապված են պատերազմի և խաղաղութեան հետ։ Այժմէականութեան խնդիրներ։ 2) Միջազգային կազմակերպութիւն, այն է՝ ա) Լա-Հէյի երկրորդ և երրորդ կօնֆերենցիաները, բ) համաշխարհային պէտիցիա (հանրագիր) երրորդ կօնֆերենցիայի անունով, գ) միջազգային դաշնակցութիւն, դ) միջազգային հասարակական իրաւունքի օրէնսգիրք, ե) համաեւրոպական մի բիւրօյի ստեղծումը, զ) օրինաւոր պաշտպանութեան իրաւունքը և պաշտպանողական դաշնակցութեան պայմանագրերի կնքումը, է) սպառազինութիւնների սահմանափակումը։

Բայց այս օրակարգից կօնգրէսը պէտք է լսէ և մի քանի ատենաբանութիւններ, այն է 1) Վիէննայի պրօֆ. Կօբաչի ողջոյնի ճառը, 2) ֆինլանդական նախկին սենատօր Լէօ Մեխելինի դասախօսութիւնը՝ «1815 թ. յետոյ տեղի ունեցած պատերազմների պատճառները», 3) «Ռուսական շարժումը յօգուտ խաղաղութեան», ատենաբանութիւն իշխան Պաւել Դոլգորուկիի, 4) «Ժողովուրդների ռազմական և խաղաղասիրական գաղթումները», ճառ Ստոկհոլմի պրօֆ. Օ. Մօնտէլիուսի, 5) Սաքսօնիայի պրօֆ. Օստվալդի ճառը՝ «Կուլտուրան և խաղաղութիւնը», 6) Հռոմի պրօֆ. Ա. դը-Գուբերնատիսի ճառը՝ «Հռոմը և խաղաղութիւնը», 7) Բօստօնի պրօֆ. Անդրեւսի ճառը՝ «Խաղաղասիրութիւնը և դաստիարակութիւնը», 8) օրիորդ Հէլէն Կէյի ճառը՝ «Կինը և խաղաղասիրութիւնը», 9) շուէդական պարլամենտի անդամ Հյալմար Բրանտինգի ճառը՝ «Աշխատաւորների դասակարգը և խաղաղութիւնը», 10) բելգիական սենատօր Լա-Ֆօնտէնի ճառը՝ «Սօցիալական խնդիրը և խաղաղութիւնը», 11) շուէդական գրող Էմիլ Սվենսէնի ճառը՝ «Մարդկութեան կորուստները պատերազմների պատճառով»։

Ինձ առանձնապէս հաճելի էր նորից տեսնել բոլոր այն նշանաւոր գործիչներին, որոնց հետ ես ծանօթացել էի Փարիզի կօնգրէսում 1900 թ. և որոնցից ոմանց հետ մինչև այսօր ես գրագրութիւն եմ պահպանել։ Պրօֆ. Անջէլօ դը-Գուբերնատիսը, թէև արդէն բաւական ծերացած, թէև միշտ եռանդուն, կրակոտ և անխոնջ, մեծ ուրախութիւն յայտնեց ինձ նորից տեսնելով, և մենք երեք անգամ համբուրվեցին թիւնների ժամանակ։ Ի թիւս միւսների ծեծվել է և գործիչ Մ. Տամատեանը։

—

Էնզէլի, 24 յուլիսի

Թէհրանից հեռագիր ստացվեց, որ սպանվել են երեք հո[illegible] մուջահիդ, որոնցից մէկը Թաղի զադէի քրոջ որդի Միրզա-Ալի-Մահմէդ խանն է, որը յայտնի էր իր գործունէութեամբ բոլորին։ Նա երիտասարդ էր, մօտ 23—25 տարեկան, և շատ վառվռուն գործիչ էր։ Այդպիսի ձախակողմեան գործողներ դժբաղդ Պարսկաստանը շատ քիչ ունի, և այսօր, այս կրիտիքական մոմենտին, ուր այդպիսի գործիչների կարիք շատ ունենք, թշնամու անարգ գնդակը տապալում է ի միջի այլոց և նրան։

Երկրի կառավարութեան ղեկը յեղափոխականների ձեռքին է. այս պայմաններում ինչ միտք՝ փողոցում տերրօր կատարել նոյնիսկ կառավարական-բռնապետականի վրա։ Այսպիսի անտակտ և միննոյն ժամանակ հակամարդկային գործողութիւններով Պարսկաստանը ձեռքից գնում է։

Որպէս երևում է, այս խմորը շատ ջուր է տանելու, որովհետև հակառակ կողմերը դիրք մտած՝ նորանոր սպանութիւններով են իրար սպառնում։

Յեղափոխական մարտիկ մուջահիդները, որոնք, իրանց կեանքից ձեռք վերցրած, ազատութեան համար էին մարտնչում, այժմ դիրքեր մտած եղբայրասպանութեամբ են զբաղված։ Մի՞թէ սրանից աւելի ցաւալի դրութիւն կը լինի մի երկրի համար։

Շատ ցաւալի դէպքերի ականատես ենք լինելու դժբաղդաբար։ Մուջահիդ

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պօլիս, 20 յուլիս

Իզմիրէ քաշուած հեռագիրներ, թէ Ներքին գործերու մինիստրին և թէ զանազան մարմիններու, կը գուժեն քանի մը սպանութիւններ, ինկած վիրաւորներ և ձերբակալութիւններ։ Դէպքերը տեղի ունեցած են կիրակի առաւօտ, մէկ օր առաջ, հայոց եկեղեցիի շրջափակին մէջ, ժողովրդային ատենաբանութեանց հարցի առիթով։

Դէպքը կը պատմուի այսպէս. Դաշնակցութեան կողմէ Նալբանդեան անունով երիտասարդ մը հրաւիրուած է նոյն օրը խօսիլ եկեղեցիին մէջ։ Այդ ձեռնարկին հակառակորդ եղած են ռամկավարներ։ Կը սկսի դաշնակցականներու և ռամկավարներու մէջ բաղխում. 32 հատ հրազէն պարպուած է. սպանուած է Քէշիշեան անունով երիտասարդ մը, հեռագիրներու ըսածին նայելով՝ ռամկավար, ուրիշ մը մահացու վիրաւորուած, որու փրկութեան յոյս չկայ. յոյն սպասուհի մը, որ չի գիտցուիր ինչպէս գտնուած է այդ տեղերը, գնդակահար սպանուած. յոյն երիտասարդ մը վիրաւորուած, նաև ուրիշներ։

Հեռագիր Դաշնակցութեան կոմիտէին. «Իզմիր, 19 յուլիս. Ստ. Նալբանդեան կուզէր բանախօսութիւն մը ընել եկեղեցիին մէջ։ Հակառակորդ կուսակցութիւնը ընդդիմացաւ։ Խուճապ առաջ եկաւ։ Քէշիշեան սպաննուեցաւ։ Պօղոս Հալաճեան ծանրապէս վիրաւորուեցաւ։ Ատրճանակի գնդակները վրիպելով՝ յոյն աղջնակ մը սպանուեցաւ և յոյն երիտասարդ մը վիրաւորուեցաւ»։

Ներք. գործ. մինիստրին ստացած հեռագիրը. «Կիրակի օր, եկեղեցիին մէջ ատենախօսութեան մը պատճառաւ, դաշնակցականներու և հակառակորդ կողմի կուսակցութիւններու միջև կռիւ տեղի ունենալով կրակ բացուեցաւ։ Երկու հոգի վիրաւորուեցան. մէկ հայ սպանուած ու մէկ յոյն աղջիկ, դուռնէն անցնելու ատեն, վիրաւորուած։ Այդ առթիւ հինգ հոգի ձերբակալուեցան։ Այսօր ալ, երկուշաբթի, ութը նոր ձերբակալութիւններ կատարուեցան»։

«Թանին» ստացած է հետևեալ հեռագիրը իր թղթակցէն. «Ինչպէս յայտնի է, սկիզբէն ի վեր անհամաձայնութիւն մը կը տիրէ եկեղեցիներու մէջ բանախօսելու և միտինգ գումարելու հարցերու մասին։ Այդ պատճառաւ, այսօր, 19 յուլիս, Իզմիրի մէջ ցաւալի դէպք մը պատահեցաւ։ Հայոց եկեղեցիին մէջ, արարողութենէ ետքը, դաշնակցական Նալբանդեան կուզէ ատենախօսել։ Նախապէս եկեղեցիին կողմէ (Թաղ. ջօջեր ըսել կուզէ) իմաց տրուած էր ոստիկանութեան ու խնդրուած էր, որ յիշեալին խօսելը արգիլուի։ Ոստիկանութիւնը երբ արգիլեց Նալբանդեանի խօսելը, յուզում առաջ եկաւ անոր կուսակիցներու մէջ։ Այս միջոցին, դաշնակցականներու և հակառակորդ ռամկավարներու մէջ կռիւ ծագեցաւ և ասոր յաջորդեց իրարանցում մը։ Երկու հոգի մեռան և երեք հոգի վիրաւորուեցան։ Ոստիկանութիւնը անմիջապէս ձերբակալեց իր կասկածած մարդիկը, ժողովուրդը ցրուեց և յաջողեցաւ հանդարտութիւնը վերահաստատել»։

Դաշնակցութեան Պօլսի կեդր. կոմիտէն հեռագրած է Իզմիրի յոյն միտրոպոլիտին. «Հեռագիրը հաղորդեց, որ հայոց եկեղեցիի միջադէպի զոհերուն մէջ կան նաև յոյն աղջնակ մը ու երիտասարդ մը։ Այս ցաւալի լուրի մասին՝ կուգանք, ձեր միջոցով, մեր ցաւակցութիւնը յայտնելու յոյն հասարակութեան և մեր դժբաղդ ազգի յետադիմական տարրերու կողմէ յարուցուած անմիտ պայքարին զոհ գացած անմեղներու ընտանիքին»։

Դուրեան պատրիարք հեռագրած է Զմիւռնիայի առաջնորդական փոխանորդին մանրամասնութիւններ տալ դէպքի մասին։ Տակաւին ոչ մէկ պատասխան։ Կուգայ անշուշտ։

Կարճ խօսքով, արիւն Զմիւռնիայի մէջ այսօր, սպանութիւններ եկեղեցիներու «բաց ու փակի» առիթով։ Տակաւին չգիտենք թէ ուրիշ ինչ կսկծալի դէպքեր տեղի պիտի ունենան յաջորդաբար, դարձեալ այդ «բաց ու փակի» առիթով։

Մեր դժբաղդութիւնը եղաւ, որ վարչական խառն ժողովը, plus royaliste que le roi, ուզեց հայրապետական կոնդակէն աւելի առաջ անցնիլ ու եկեղեցիները ամուր փակելու որոշում տալ, ոչ մէկ գումարումի առջև տեղի չտալու պայմանաւ։

Իսկ ամենավերջին դժբաղդութիւնը սա է, որ այլասերուած տարր մը, ուր կարելի է գտնել եպիսկոպոսներ իսկ, որևիցէ ըմբռնումէ զուրկ, ամեն հովէ շարժող, եկած ամեն ձայնի լսող, այսօր պարզօրէն գործիք է թունաւոր ներշնչութեանց, և, թագուն լարերու շարժումներով, մէջտեղը կուգայ եկեղեցիի պաշտպանութեան անունով, դաշոյնը ձեռքը և մա՛հը աչքը առած։

Եզրակացութիւն։ Այսօր Զմիւռնիայի մէջ արիւն, վաղը միւս օր գուցէ Պօլսի մէջ, ու այսպէս ուրիշ տեղեր, ու այս ամենը՝ որպէսզի եկեղեցիները «փակ» մնան, ու խօսքի դէմ արգելքը քարանայ։

Հարցը սա պիտի մնայ միշտ. կուսակցութիւնները կը պնդեն, թէ եկեղեցիները քանի որ «բաց» եղած են միշտ ժողովրդային ատենախօսութեանց առջև, պէտք է նոյն ձևով շարունակեն. հակառակորդները, հայրապետական կոնդակին կռթնած, «Թոյլ չպիտի տանք» կըսեն։

Ու զարմանալին սա է, որ այսօր յոյները, որոնք այդ կարգի սովորութիւն չունէին, միտինգ կը կազմեն, գումարումներ կընեն եկեղեցիներու մէջ, թիւրքերը նոյնպէս՝ մզկիթներու մէջ. իսկ մենք, որ արդէն վարժուած էինք բաց տեսնել եկեղեցիներուն դուռները ժողովրդային գումարումներու առջև նոյնիսկ Համիդի օրով, այսօր, սահմանադրական կառավարութեան ատեն, ինքնաբռնութեան սկիզբն կը դնենք։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

XLIII

Իւրաքանչիւր անգամ, երբ ես գնում եմ Ներսիսեան դպրոց, այնտեղ՝ բակում տեսնում եմ մի ժիր, զուարթադէմ ծերունի։

Դա հռչակաւոր պարոն Գրիգորն է։

Դա 53 տարի, ինչպէս աչալուրջ պահապան, կանգնած է Ներսիսեան դպրոցի շեմքին։

Նա անբաժան կցվել է այդ հինաւուրց դպրոցի հետ։

Բաժանել նրան դպրոցից՝ կը նշանակէ կտրել կուռը, անդամահատել նրան։

Մտնում էք թէ չէ դպրոցի դարպասից ներս, պարոն Գրիգորը, իբրև քաջարի թիկնապահ, սիրալիր դէմքով և պատրաստ՝ ձեզ մի որևէ ծառայութիւն մատուցանելու, ցցվում է ձեր առաջ։

Խոստովանում եմ անկեղծ, որ ես ամեն անգամ նախանձով եմ նայում այդ դպրոցի հին գրենադերի վրա։

Եւ մտքումս ասում եմ.

— Դու ամենաերջանիկ մարդն ես. երանի՜ քեզ։

Եւ երանի՜ նրան։

Դա միակ անզուգական և հազւագիւտ նմուշն է, որ հայկական կեանքի երերուն, փոթորկալից կեանքի միջով անցել և կանգուն է մնացել մի հիմնարկութեան շեմքին կէս դարից աւել։

Հայկական հիմնարկութեան շեմքը ամբոխայոյզ, կենդանի կայարան է եղել միշտ։

Գնում են, մտնում են, բայց մնացող չը կայ։

Պարոն Գրիգորը եկել է և մնացել 53 տարի։

Նրա ալևոր գլխովը պատմութեան էջեր են անցել ու դարձել։

Դա, գիտէ՞ք, հրաշք է։

Եւ երանի՜ նրան։

Ես նախանձում եմ նրան։

Գիտէ՞ք ինչու։

53 տարվայ ընթացքում այդ զուարթ ծերունու սիրտը բաբախել և ջերմացել է իր սիրած հիմնարկութեան յարկի տակ։

Եւ ստեղծել է նրա համար մի աննման կեանք, որ վճիտ աղբիւրի նման հոսել է մի շարք սերունդների միջով, որոնց սիրել, փայփայել, գուրգուրացել է այդ ծերունի պատանին։

Եւ նա թարմ է մնացել։

Եւ նա զուարթ ու առոյգ է մնացել։

Նրա սէրը և այն հիմնարկութիւնը, որն այդքան երկար տարիներ պատսպարել է նրան, ծառայել է իբրև պողպատէ զրահ։

Եւ թարմ է պահել նրան։

Եւ զուարթ է մնացել։

Նախանձում եմ քեզ, հայ դպրոցի հինաւուրց գրենադեր։

Դու ամենաերջանիկ մարդն ես։

Իսկ մենք, հայ ուսուցիչներս, ամենաթշուառ, ամենաապերջանիկ մարդիկն ենք։

Մենք սիրել ենք ամենաջերմ սիրով և լաւագոյն յոյսերով եկել ենք նոյն հայ դպրոցը, բայց եկել և գնացել ենք և չենք մնացել։

Եւ եթէ այսօր մենք դարձել ենք թափառաշրջիկ բօշաներ, մեղաւորը մենք չենք, մեղաւորը նոյն հայ դպրոցն է, որ խորթ մօր պէս և տաքացրած իժի նման է մեզ ընդունել։

Եւ նրանք, որոնք տաք տեղից և հայ ուսուցչի դառնութիւնները չը ճաշակած՝ մեղադրում են հայ դպրոցի զարվիշին բօշայութեան մէջ, յանցանք են գործում, մեղանչում են այդ խեղճ հայ Макаръ-ի առաջ, որի գլխին ջարդում են բոլոր այն ընկոյզները, որոնց չեն դիմանում իրանց ատամները։

XLIV

Տխուր է, շատ տխուր։

Օգոստոսը մօտենում է և բազմաթիւ հայ ուսուցիչներ թափառում են Թիֆլիսի փողոցներում անգործ, պարապ։

Դուք կը տեսնէք յուսահատ, հիասթափված դէմքեր, որոնք գուցէ անիծում են այն օրը, որ գնացել են հայ դպրոցի շեմքը։

— Իդէալի՞զմ,—կը գոռաք դուք, որ փափուկ և ապահով կեանքից պատգամներ գիտէք կարդալ,—դէպի ժողովո՛ւրդ,դէպի գի՛ւղ,—և ուրիշի ձեռքով գիտէք չիկացած կրակներ վերցնել. բայց մտէք այդ նահատակների կեանքը, կաշուի մէջ և լսեցէք՝ թէ ի՜նչ թշուառութիւններ են տարել և ո՜րքան զոհողութիւններ արել հայ դպրոցի համար։

Դուք, որ անուն և պատիւ էք վայելում մի քանի գրօշներ շպրտելով հայ դպրոցի երեսին, գիտէ՞ք ինչ արիւն-քրտինքով և տանջանքով է վաստակում հայ վարժապետը այդ գրօշները։

Եւ նա զուրկ է նոյն իսկ փայփայելու, գուրգուրալու զգացմունքից իր սիրած հիմնարկութիւնը։

Նա թափառական է։

Նա բօշա է։

Կերթան ու կուգան։

Մնացող չը կայ։

Նախանձում եմ քեզ, հայ դպրոցի գրենադեր։

Դու ամենաերջանիկ մարդն ես։

Յակովբ Գենջեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 23 յուլիսի

Ինչպէս յայտնի է, պաշտօնապէս արդէն բացված է համարվում Ախալցխայի պրոգիմնազիան. ընդունելութիւնը տևելու է մինչև օգոստոսի 20-ը, քննութիւնը՝ 20—27-ը։ Առ այժմ բացվելու են 3 պատրաստականներ և առաջին ու երկրորդ դասարանները. ուսման վճարը 80 ռ. է՝ երկու մասի բաժանված. խնդիրն իր վկայականներով (ծննդեան, ծագման և պատուաստման) ընդունվում է այստեղ վերատեսչի անունով քաղ. վարչութեան միջոցով։

Ի նկատի ունենալով Ախալցխայի տնտեսական և կլիմայական նպաստաւոր պայմանները, անշուշտ օտար երկրներից էլ կը լինեն մեր պրոգիմնազիան յաճախողներ. որքան շատ, այնքան լաւ. հետևաբար իւրաքանչիւր տարի աւելանալու են հետևեալ բարձր դասարանները։ Աւ. Աս.

—

Բրդան (Ղազախի գաւ.), 25 յուլ.

— Տէր հայր, էս ջուրը մեր տները քանդել ա,—վշտով վրա բերեց Ալլահվերդի բիձան, երբ մի բաժակ խմելուց յետոյ՝ յայտնեցի հիացմունքս։

Եւ նա բացատրեց, որ իրանց աղբիւրի ջուրը խիստ առողջարար ու ախորժակ տուող է, որի պատճառով ուտելու մթերքները արագ սպառվում և ժողովրդին քաղցի են մատնում։

Խեղճ մարդիկ... այն ժամանակ, երբ ունևոր մարդը զանազան ըմպելիքներով ու աղցաններով աշխատում է գրգռել իր ախորժակը, աղքատ գիւղացին անիծում է իր ջուրը, որ ախորժակ բանալով «քանդում է իրանց տները»։

Ալլահվերդի բիձան իրաւունք ունի դըժգոհելու, քանի որ բնութեան արհաւիրքներից շարունակ տուժող այդ գիւղը համարեա ոչ մի տարի կուշտ փորով հաց չէ կերել։

Ամբողջ գիւղում (70 տուն) հազիւ մի երկու գրագէտ կայ. հովւում է մօտակայ գիւղի զառամեալ քահանան, որ իր անունը ստորագրելը ևս մոռացել է վաղուց։ Ի հող իջած եկեղեցին, որ տասը տարի առաջ Մեսրոպ քահ. Եղիշեանի ջանքերով վերաշինվեց, նիւթականի պատճառով մնացած էր հողածածկ և նորից վտանգված, երբ Քարվանսարայի տանուտէր Անդրէաս Գապեանը իր գիւղացի Ս. Եղիշեանից, Բ. Ղազումեանից, Գ. Թումանեանից, Վ. Ղազումեանից և Գր. Նազարեանից խնդրելով և ստանալով 500-ական կղմինտր՝ ուղարկեց նրանց եկեղեցու համար և որոշեց հէնց իրանց քրդևանցոց աջակցութեամբ վերջ տալ գործին։ Զաք. ք. Ապրեսեանց

—

Բադա (Գանձ. գաւ.), 20 յուլիսի

Ամսիս 12-ին Գանձակի գաւառապետը և ինսպէկտոր Տէր-Սահակեանցը եկան Բադա, շրջեցին Սանդար կոչված հանդամասը, որ վերջերս կարկտահար եղաւ, մանրամասն քննեցին կարկտից վնասված ցորենի ու գարու արտերը։ Նրանց կազմած նախահաշուից երևաց, որ կարկուտը 16,176 րուբլու վնաս է հասցրել։ Շուտով այստեղից պատգամաւորներ կը գնան և խնդրագրով կը ներկայանան Կովկասի Փոխարքային՝ նորին պայծառափայլութեան բարեհաճ ուշադրութիւնը հրաւիրելով վնասված վայրերի վրա։ Մ. ք. Ստեփանեանց

—

Գօրի, 26 յուլիսի

15 օր է, որ այստեղից 18 վերստի վրա գտնվող Մեջվրիսխեվ գիւղում խոլերան օրական 10—15 զոհ է տանում, և մեր քաղ. վարչութիւնը չը կարողացաւ հարկաւոր եղած միջոցները ձեռք առնել, որպէսզի մեջվրիսխեվցիները չը կարողանային ազատ մտնել Գօրի առանց դեզինֆեկցիայի։ Իսկ այսօր, երբ արդէն այստեղ էլ երեք հոգի հիւանդացան և երկուսը մեռան, մեր քաղ. վարչութիւնը քնից զարթնեց և շատ էլ իրան դէս ու դէն է խփում, բայց արդէն ուշ է. մինչև խոլերան ներս գալը պէտք էր միջոցներ ձեռք առնել և ոչ թէ ներս գալուց յետոյ։ Երբ 15 օր սրանից առաջ 10—15 հոգի գնացինք քաղաքագլխի մօտ և հարցրինք, թէ արդեօք ինչ միջոցների է դիմել քաղ. վարչութիւնը խոլերայի առաջն առնելու համար, նա սառնասրտութեամբ պատասխանեց, որ մտադիր են ժողով կազմել և մտածել՝ թէ ինչ միջոցների է հարկաւոր դիմել։ Լա՜ւ ժողով կայացրին։ Մէկ ամիս է բարակները շինել են, բայց մինչև օրս ոչ բժիշկ են վարձել և ոչ էլ ֆելդշեր։ Վերջապէս յոյսներս դրել ենք Աստուծոյ վրա։ Գօրեցի

—

Շուլավէր, 24 յուլիսի

Ամսիս 20-ին Շուլավէրի հաշտարար դատարանում քննվեց ուսուցիչներ Ան. Ղազարեանի և Յար. Տէր-Յարութիւնեանի գործը, որը երկու ամսից աւելի էր, ինչ տեղացի պարապ տղաների զբաղմունքի նիւթ էր դառել։ Ան. Ղազարեանը իր երեք ընկերոջ կեղծ վկայութեան վրա վստահացած, որպէսզի Տէր-Յարութիւնեանից, իբրև իր հակառակորդից, վրէժ առնի, դատարանին գանգատվում է, որ Տէր-Յարութիւնեանն իբր թէ ժողովի ժամանակ իրան ապտակել է։ Սակայն դէպքին ներկայ եղող հոգաբարձուները և ուսուցիչները բոլորովին այլ ցուցում տուին։ Դատաւորը երկու կողմի ցուցումները լսելուց յետոյ Տէր-Յարութիւնեանին արդար ճանաչեց և մերժեց Ա. Ղազարեանի գանգատը։ Զաւէն

—

Զաքաթալա, 24 յուլիսի

Մի քանի օր առաջ կայծակի արագութեամբ տարածվեց մեր քաղաքում, որ շրջանիս Կախ աւանում խոլերայի մի դէպք է տեղի ունեցել։ Զաքաթալայի շրջանի կառավարիչ գնդապետ Ա. Ի. Սուչչինսկին բժիշկ Ն. Բէգալեանի հետ շտապեց դէպքի վայրը, ուր մանրազննին քննութիւնից երևաց, որ ո՛չ մի խոլերայի դէպք տեղի չէ ունեցել։

Ի դէպ. գարունը եկաւ անցաւ, ամառն էլ անցնելու վրա է, Զաքաթալայից Թիֆլիս, Նուխուց՝ Զաքաթալա և, ընդհակառակը, մեր ճամբորդները ազատ, անվախ, անվնաս երթևեկում են և ի բաց առեալ մանրմունր դէպքերը, որոնք կատարվել են գիւղերում, ոչ մի դժբաղդութիւն չէ պատահել ճանապարհներին նրանց հետ. և այդ մեր անդորրութեան, խաղաղութեան, ապահովութեան համար պարտական ենք գնդապետ Սուչչինսկիին, որի գլխաւոր հոգսերից մէկը իր շրջանում աւազակութիւնը արմատախիլ անելն է, որ և աջողվեց, որով ամբողջ ազգաբնակութեան սիրելին դարձաւ։ Բայց այդպէս չէր իր նախորդների օրով. նրանք իրանց տաքուկ բնակարանից գլուխները դուրս չէին հանում՝ տեսնելու իրանց թշուառ ժողովրդի ալեկոծված, վրդովված կացութիւնը... Իսկ այժմ այդպէս չէ, մեր կառավարիչը՝ երկիրը խաղաղեցնելուց յետոյ՝ մէն-մենակ շրջագայում է գիւղերում՝ տեղնուտեղը ուսումնասիրելու իր ժողովրդի կարիքները, կացութիւնը և ի հարկին մի դարման անելու։

Այս ամառ մեր քաղաքը ամարանոց եկողների թիւը քիչ է անտանելի շոգերի պատճառով։ Մօտ մի ամիս է, ինչ տարափոխիկ հիւանդութիւնները բուն են դրել մեր մանուկների մէջ, որոնց զոհ եղան և լինում են շատ երեխաներ։ Լաւ կը լինէր, որ ծնողները հում ջուր ու միրգ իսկի չը տային իրանց զաւակներին։

Աստ. Բէկ-Յովսէփեան

—

Գանձակ, 24 յուլիսի

Յուլիսի 17-ից մինչև 22-ը տեղիս Շամախեան 261-րդ հետևակ զօրագնդի զինւորները, ընդամենը 16 վաշտ, իշխանութեան կարգադրութեամբ Գանձակից ընդմիշտ հեռացան զանազան տեղեր։

Զօրագնդի գլխաւոր գնդապետ Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Սաֆօնովի հեռանալը Գանձակից շատ և շատ զգալի է բոլոր գանձակեցիների համար. ինչպէս ընտանիքի մի սիրելի անդամը հեռանալով օտար երկիր՝ թողնում է իր ետևից հարազատներին անմոռաց յիշատակ, նոյնը՝ և դեռ աւելի մեծ չափով՝ թողեց յարգելի գնդապետը անխտիր Գանձակի բոլոր հայերի սրտերում. նա իր մարդասէր, շիտակ և ազնիւ բնաւորութեամբ միանգամայն գրաւել էր ամենքին դէպի իրան։ Սիրելի գնդապետի ցոյց տուած մարդասիրութիւնները հայ-թուրքական կոտորածների միջոցին, երբ յանձնված էր նրան քաղաքի պաշտպանութիւնը (начальникъ охраны), մինչև օրս թարմ են մնացել և կը մնան էլ անջնջելի. նրա տան դուռը անխտիր ամենքի համար բաց էր և բոլորի խնդիրներին էլ սիրով բաւականութիւն էր տալիս, սփոփելով անմխիթար և ճնշված սրտերին։ Մի խօսքով՝ բառի բուն նշանակութեամբ նա ողորմած և բարի հայր էր ամենքի համար։

Գնդապետ Սաֆօնովի իշխանութեան տակ գտնվող բոլոր օֆիցէրները զինւորների հետ միասին նոյնպէս սիրով և քաղցր էին վերաբերվում դէպի ազգաբնակութիւնը. ի հարկէ այդ ևս պիտի վերագրել յարգելի գնդապետին, քանի որ նա արի և աչալրջութեամբ էր վերաբերվում իր ստորադրեալներին։

Աւելորդ չեմ համարում յիշել և մի այլ յարգելի անձնաւորութեան մասին, որի հե-

---

շտապեց յայտնել, որ եկող տարի Հռոմում մեծ տօնախմբութիւններ են լինելու իտալական անկախութեան 50-ամեակի առիթով, որ խաղաղութեան XIX կոնգրէսը այդտեղ պէտք է կայանայ և յոյս յայտնեց, որ թէ ես և թէ շատ ուրիշ հայ գրողներ կը գնան Հռոմ՝ մասնակցելու այդ տօնախմբութիւններին։

Գալով շուէդական հասարակութեան և մամուլին, պէտք է ասեմ, որ հասարակութիւնը մեծ համակրութեամբ և հետաքրքրութեամբ է վերաբերվում կոնգրէսին։ Շատ ընտանիքներ փութացել են հիւրասիրել օտարական կոնգրէսիստներին. շուէդական թագաւորը ցանկութիւն է յայտնել հիւրասիրել կոնգրէսի անդամներին իր պալատում. զանազան հիւրանոցներ, հաստատութիւններ առանձին զեղչեր են նշանակել օտարական կոնգրէսիստների համար. բանկէտներ և պտոյտի արշաւախմբեր պէտք է տեղի ունենան ձրիաբար օտարական կոնգրէսիստների համար և այլն։

Մամուլն էլ, ի հարկէ, առանձին ուշադրութեամբ է վերաբերվում կոնգրէսին։ Ես առաջ կը բերեմ միայն մի նշանաւոր թերթի, ամենօրեայ «Stockholms Dagblad» («Ստոկհօլմի Օրաթերթ») լրագրի այսօրվայ առաջնորդող յօդուածի թարգմանութիւնը (№ 204).

«Երբ մի յետադարձ ակնարկ ենք ձգում Եւրոպայի պատմութեան և նրա կուլտուրայի վրա, վերջին տասնամեակների ընթացքում, մենք զարմանում ենք պատերազմի համեմատական բացակայութեան վրա։ Այդ բաղդաւոր վիճակի գլխաւոր պատճառները պէտք է որոնել այն սերտ կապերի, այն լաւ հաղորդակցութիւնների, առևտրական և ֆինանսական յարաբերութիւնների մէջ, որոնք հետզհետէ աւելի և աւելի սերտ կերպով հաստատվում են ազգերի միջև։ Մենք չենք վարանում առաջին աստիճանի վրա դնել այդ զանազան նիւթական գործօնները, որովհետև մի պատերազմ եւրոպական պետութիւնների մէջ, մասնաւորապէս Արևմտեան Եւրոպայում, այնպիսի մեծ յեղաշրջումներ առաջ կը բերէր, որ ահագին ոյժեր են գործ դրվում խաղաղութիւնը պահպանելու համար։ Խաղաղութիւն տարածողների երկրորդ աստիճանի վրա մենք կը դնենք իդէական գործօնները, գիտութիւնների աճումը և հասարակական մտաւոր աշխատութիւնը։ Գաղափարական խաղաղասիրական գործի աշխատաւորների մէջ մենք պէտք է ամենից առաջ դնենք այսօր զանազան կուլտուրական երկիրների Խաղաղութեան Ընկերութիւնները, որոնք այսօր իրանց ներկայացուցիչներն են ուղարկել Ստոկհօլմ՝ XVIII համաշխարհային կոնգրէսին։ Որքան շատ գործնական դառնայ այդ ընկերութիւնների բնաւորութիւնը, որքան շատ նրանք ըմբռնեն իր ամբողջութեան մէջ ազգերի անհատական և նրանց միջազգային յարաբերութիւնների ոգին, նրանք այնքան լաւ կը հասնեն իրանց առաջադրեալ նպատակին։ Աւաղ, պէտք է ասել, որ խաղաղութեան աշխատութեան մէջ կայ շատ զգայնականութիւն, վատ ուղղված, որ սկզբունքով զանցառութեան է տալիս հայրենիքի գաղափարը թէ անհատի և թէ համաշխարհային կուլտուրայի համար։ Այդ մասնակի տարրերը պէտք է որքան կարելի է շուտով հեռացվէին Խաղաղութեան միջազգային գործի բարիքի համար։ Ինչպէս չէ կարելի նպատակ դնել ջնջել մի ազգի մէջ բոլոր առանձնայատկութիւնները, բոլոր անհատական գծերը, նոյնպէս չէ կարելի, համաշխարհային զարգացման գործի մէջ, մի կողմ թողնել ազգերի կուլտուրական ահագին կարևորութիւնը։ Նպատակը պէտք է լինի կանոնաւորել ազգերի հանդիսաւոր գնացքը Խաղաղութեան տաճարի մէջ, ոչ թէ միմեանց խեղդելու կամ ջարդելու համար, բայց շնորհիւ մտաւոր ձիրքերի փոխանակութեան, արտադրելու և զարգացնելու համար մի աւելի մեծ, աւելի ազնիւ մարդկութիւն։

«Ահա այն յոյսով, որ այս տարվայ համաշխարհային կոնգրէսը հզօրապէս կը նպաստէ այդ զարգացման, մենք մաղթում ենք նրա օտարական անդամներին մի շատ սրտագին բարի գալուստ։ Թող նրանք լաւ իմանան, որ շուէդական ազգը պատրաստ է հարկաւոր դէպքում նուիրել մեծ զոհաբերութիւններ Խաղաղութեան սեղանի վրա. նա, շուէդական ազգը կը զոհէ իր նախապաշարումները և իր երևակայութեան ամենափայլուն երազները։ Բայց կայ մի զոհաբերութիւն, որ նա երբեք չի անի— իր կեանքի և ազատութեան զոհաբերութիւնը»։

—

Այսօր նախապէս տեղի ունեցաւ սկանդինավեան երկիրների (Շուէդիայի, Նորվեգիայի, Դանիայի) խաղաղութեան ընկերութիւնների ընդհանուր ժողովը, որի նկարագրութիւնը կը տամ յաջորդ անգամ։

Հ. Առաքելեան

ռանալը զօրքի հետ նմանապէս քիչ ցաւը պատճառեց գանձակեցիներին. այդ անձնաւորութիւնը բժշկապետ Գերասիմ Բէգլարօվին՝ Մելիք-Բէգլարեանցն է. նա 22 երկար տարիների պաշտօնավարութեան ընթացքում ցոյց է տուել ծառայութիւնից դուրս մեծ եռանդ. օր ու գիշեր հանգստութիւն չունէր, հմուտ և փորձված բժշկի համբաւ ունէր և բարի բուն նշանակութեամբ ծառայում էր իր բարձր կոչման, որի համար և բոլոր ազգութիւնների կողմից սէր և յարգանք էր վայելում:

Շամախեան գնդի փոխարէն յուլիսի 17-ին Բագուից տեղս ժամանեցին Պլաստունեան հետևակ 5 վաշտեր:

Քաղաքային վարչութեան կողմից, ամսիս 19-ին, երկաթուղու կայարանում, հեռացող զօրքերին նուիրվեց արծաթեայ Տիրամօր մի պատկեր:

Համեմատաբար անցեալ տարիների, մեզանում, այս տարի շատ շոգեր է լինում. քաղաքում համարեա թէ մարդ չէ մնացել, բոլորը գնացել են Գանձակի մօտ գտնվող ամարանոցները: Գանձակեցի

ԲԺ. ԱՂԱՄԱԼԵԱՆԻ ՍՊԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժիշկ Աղամալեանի սպանութեան եղերերգութեան հիմնական պատճառները դեռ չեն պարզված, իսկ նրան սպանող Մարտիրոսեան զոյգի մասին ամեն օր պարզվում են նորանոր մանրամասնութիւններ, մէկը միւսից անսպասելի և սարսափելի:

Մարտիրոսեան զոյգը նախ քան Թիֆլիս գալը և սպանութիւն կատարելը՝ եղել է մի քանի ամիս Մոսկվայում:

Թէ ինչ են անելիս եղել նրանք այնտեղ՝ մինչև այժմ անյայտ էր հասարակութեան: Այժմ Մոսկվայի թերթերը բերում են այնպիսի տեղեկութիւններ Մարտիրոսեանների մասին, որոնք գերազանցում են ամեն մի երևակայութիւն:

Այստեղ զետեղում ենք «Р. У.» թերթից հետևեալ պատմութիւնը Մարտիրոսեան ամուսինների մասին:

«Այն անձերը, որոնց հետ Մարտիրոսեանը շփումներ է ունեցել Մոսկվայում, շատ անախորժ տպաւորութիւն են ստացել այդ ջահել զոյգի կեանքի մասին:

«Մարտիրոսեանը վերջին 2½ ամիսները ապրում էր Մոսկվայում, իշխան Գագարինի տանը, Կուզնեցկի մուտքի վրա: Թէ ինչ սոսկալի կեանք էր դա, այդ մասին սարսափով են յիշում բնակարանի տիրուհին և բոլոր այն անձերը, որոնք ակամայ վկաներ էին լինում այն ամենի, ինչ որ կատարվում էր Մարտիրոսեանի սենեակում:

«Սկսենք այդ զոյգի գալուց իշխան Գագարինի տանը: Դա ապրիլի վերջումն էր: Բնակարանի տիրուհու մօտ եկաւ մի օտարոտի երիտասարդ՝ աստիճանաւորի զգեստով, տուժուրկայով, բայց թրով:

«Նա ակնարկեց սենեակի վերաբերութեամբ և նոյն օրը տեղափոխվեց: Նրա հետ էր և մի մանկահասակ ուղեկցուհի, որը, ինչպէս յետոյ յայտնվեց, նրա կինն էր: Աղջկայ արտաքին կիսամանկական տեսքը չէր սազում կին հասկացողութեանը: Բայց ինչևիցէ, Մարտիրոսեանը անմիջապէս պատմեց տանտիրուհուն, որ թէև նրա կինը 16 տարեկան է, բայց հայ քահանան նրանց պսակել է և նա ունի վաւերաթուղթ:

«Սկզբում Մարտիրոսեանը իր դոկումենտները չը տուեց և գրեց թերթերի վրա իր և ամուսնու անունները: Յետոյ ներկայացրեց և անցագիրը, որի մէջ ասված էր, որ նա Թիֆլիս քաղաքի բնակիչ է Մարտիրոսով կամ Մարտիրոսեանց անունով:

«Առաջին երկու շաբաթը երիտասարդ զոյգը առանձին յայտնութիւններով աչքի չընկաւ: Բայց այդ շրջանից յետոյ նրանց հարևանների հանգստութիւնը սկսվեց խանգարվել ամենավհատեցուցիչ կերպով:

«Նախ և առաջ, երկու շաբաթ ապրելուց յետոյ, մի անգամ Մարտիրոսեանին տուն բերին ամենասոսկալի վիճակի մէջ: Նա իրան վատ էր զգում, նա բոլոր ժամանակը բղաւում էր, որ նրան թունաւորել է մի բժշկի կին, որի հետ նա մտերմական յարաբերութիւն է ունեցել և որ այդ կինը գողացել է նրանից 3,000 րուբլի:

«Հրաւիրում են բժիշկ: Նա յայտնում է, որ Մարտիրոսեանը ոչ աւել, ոչ պակաս՝ այլ արբած է և ամենևին թունաւորված չէ: Կասկած յարուցվեց, որ Մարտիրոսեանից կինը վերցրած լինի 3,000 րուբլի:

«Թէև արտաքուստ Մարտիրոսեանը իրան համեստ էր պահում, այնուամենայնիւ բնակարանի մէջ ապրողները սկսեցին մեծ կասկածանքով նայել նրան: Արդարև՝ նա իրան մէկ անուանում էր ուսանող-բժիշկ, մէկ անուանում բժիշկ, մէկ՝ համալսարանի սան, որ եկել է դիսերտացիա պաշտպանելու:

«Իսկ այն երեկոյեան, երբ նրան հիւանդ տուն բերին, նա աղաղակում էր, որ նա երբէք բժիշկ չէ եղել, այլ եղել է երաժշտապետ:

«Մարտիրոսեանը հազիւ մի կերպ կազդուրվեց, բայց այդ ժամանակից սկսվեց ամուսինների սենեակում ինչ-որ վատ բան կատարվել: Ամեն օր այնտեղից լսվում էին հառաչանքներ և կանացի սոսկալի ճիչեր:

«Մի անգամ բացվում է դուռը և այնտեղից լսվում է ձայն՝

«— Սաշա (աղախնի անունն է) շուտով ջուր բերէք, Տանիան (Մարտիրոսեանի կինը) իրան վատ է զգում:

«Այդպէս աղաղակում էր Մարտիրոսեանը: Երբ աղախինը ներս մտաւ, յատակի վրա մեկնած էր Մարտիրոսեանի կինը: Արտաքին տեսքից դա մի դիակ էր: Սակայն Մարտիրոսեանը ընկաւ կնոջ վրա և նրան թօթվելով՝ սկսեց հրամայողաբար ասել.

«— Տանիա, արթնացի՛ր, ուշքի եկ, ես միայն փորձեր էի անում:

«Դժուարութեամբ երիտասարդ կնոջը ուշքի բերին: Երևում էր, որ նա ոչինչ չը գիտէր եղելութեան մասին:

«Ընդհանրապէս Մարտիրոսեանը բոլորի առաջ ամեն կերպ պախարակում էր իր կնոջը, դիմելով նոյնիսկ բռունցքների:

«Առանց պատճառի, նա հայհոյում էր կնոջը ամենատմար խօսքերով և միաժամանակ աղաղակում էր բնակիչներին.

«— Պարոններ, դուք ուշադրութիւն մի դարձնէք այս ամենի վրա. նա անցեալ ունի: Նա սիրում է ամեն տեսակի խթաններ (шпоры): Սրա առաջին սիրահարը մի օֆիցեր է:

«Եւ հենց տեղնուտեղը դառնում էր կնոջը և ամենքի առաջ հարցնում.

«Չէ՞ որ ճշմարիտ է, Տանիա:

«Երիտասարդ, անտէր կինը լսում էր: Սա բնորոշիչ է նրա համար, որ Մարտիրոսեանը Աղամալեանի անունը երբէք չէր յիշում: Երևում էր ինչ-որ օֆիցեր, ամենից յաճախ:

«Այսօրինակ տեսարաններ կրկնվում էին ամեն օր:

«Անօրակելի ցինիկ Մարտիրոսեանը սկսեց չը տեսնված բաներ անել: Ցերեկով նա ստիպում էր կնոջը մերկանդամ կանգնել պատուհանի առաջ, չը նայած որ դիմացի կեցողներն այս բոլորը տեսնում էին: Այս ամենը արվում էին որոշ նպատակով և բոլորին ցոյց տալու համար:

«Պատահում էր և աւելի վատը: Կամ Մարտիրոսեանը յանկարծ կանգնեցնում էր կնոջը լուսամուտի առաջ և բոլոր ոյժով խփում նրան, որտեղ էլ պատահէր, որպէսզի հարևանները տեսնէին: Անբաղդ կինը մահամերձ ընկնում էր գետին:

«20-ամեայ հրէշ ամուսինը, բոլորովին ոչինչ չէր անում: Բայց փողեր էր ծախսում անհաշիւ կերպով: Ջանկից առաջ ստանալով 2000 ր. անյայտ մի տեղից՝ նա կանչում էր իր մօտ և սուրհանդակին (почтальонъ), և հեռագրիչին, և դռնապանին ու բաժանում էր դրամներ առանց որևէ հաշւի:

«Մարտիրոսեանն իր ծանօթներին պատմում էր ինչ-որ անսպառ հարստութիւնների և փող ձեռք բերելու միջոցների մասին:

«Ամեն օր նա ուղարկում էր մօտ վեց հեռագիր և յաճախ մինչև լոյս գրում էր ինչ որ նամակներ:

«Առաջին օրից իսկ, երբ երիտասարդ զոյգը մուտք գործեց նոր բնակարանը, ամենայն խնամքով սկսեց փակել սենեակի դռները: Ընդ նմին, եթէ լսվում էր որևէ զանգի ձայն, երկու գլուխ վախով հետևում էին մտնողին:

«Մասնաւորապէս Մարտիրոսեանը վախենում էր ոստիկանութեան երևալուց: Պատահեց, որ ոստիկանութիւնը ինչ-որ սարթով պիտի գար: Դրանից առաջ Մարտիրոսեանի կինը ման էր գալիս բոլորովին մերկանդամ: Բայց հազիւ իմացան, որ հեռախօսով ոստիկանութիւն է հրաւիրվում, երկու րոպէից յետոյ տիկ. Մարտիրոսեանը հագնված էր ամբողջապէս: Ամուսինները կարծէք թէ պատրաստվում էին ուր-որ մեկնելու: Նրանց ձեռքում կային ճանապարհորդական պայուսակներ: Ոստիկանութեան երևալու երկիւղը վերջին օրերը հասաւ իր գագաթնակէտին:

«Ամեն րոպէ Մարտիրոսեանները պատրաստ էին փախչելու: Որովհետև դուռը շարունակ խնամքով փակվում էր, դրա համար էլ զոյգը հետաքրքրեց շրջապատողներին, դրա համար էլ հարևանները մի անգամ ներս նայեցին դռան արանքից: Սեղանի ետևը նստած էր Մարտիրոսեանը, իսկ նրա առաջ թափված էին մեծ քանակութեամբ հին նամակադրոշմներ: Ամեն օր Մարտիրոսեանը անհուն երկիւղով այրում էր թղթեր այն տեղում, ուր ջուր են թափում: Աղախնի նկատողութեանը՝ Մարտիրոսեանը պատասխանում էր.

«— Էհ, Սաշա, եթէ դուք իմանայիք, թէ ինչ թղթեր են սրանք, երբէք ոչինչ չէիք հարցնի: Այստեղ կէս-Մոսկվան է:

«Մարտիրոսեանի վարմունքները քանի գնում՝ կասկածելի էին դառնում: Նրանցից սկսեցին վախենալ: Կնոջ հետ տմարդի վարմունքը առիթ տուեց տանտիրուհու բողոքներին, բայց Մարտիրոսեանը շարունակում էր իր գազանութիւնները՝ չը քաշվելով կողմնակի աչքերից: Մոսկվայից մեկնելուց քիչ առաջ՝ մի օր Մարտիրոսեանը երեկոյեան ժ. 6-ին դուրս եկաւ տնից: Կէս ժամից յետոյ ներս վազեց բնակարանը, բայց իր սենեակը մտնել չը կարողացաւ, որովհետև դուռը փակված էր բանալիով: Մարտիրոսեանի բաղխումներին, որը ցնցում էր ամբողջ բնակարանը, ոչ ոք չէր պատասխանում: Նա կանգնեց նստարանի վրա և պատուհանից ներս նայելով՝ կանչեց տանտիրուհուն.

«—Տանիան մեռնում է. որևէ կերպով պիտի բաց անել դուռը:

«Սկզբում սկսեց մուտքի դուռը կոտրատել, բայց յետոյ գլխի ընկան միւս դուռը բաց անել, որը շարունակ փակ էր պահվում. Երբ ներս մտան, գտան Տանիային մահվան դժգունութիւնը երեսին և միայն մի շապիկ հագին՝ ընկած յատակի վրա: Մարտիրոսեանը վազեց դէպի նա:

«— Տանիա, զարթիր, ուշքի եկ.—և սկսեց նրան ցնցել, մինչև որ Տանիան ուշքի եկաւ:

«Մարտիրոսեանը Մոսկվայից մեկնելուց շատ առաջ՝ սկսեց կնոջն իրանից հեռացնել և այդ մասին շարունակ բղաւում էր, որպէսզի հարևաններին լսելի լինէր: Այդպիսի դէպքերում Տանիան ծնկի էր գալիս նրա առաջ և աղաչում էր, որ ամուսինն իրան դուրս չանի: Այս տեսարանների դաժանութիւնը մնում էր անլուծելի: Այս բոլորն առանձնապէս զարմացնում էին հարևաններին և դիմացի կենողներին: Երբ Տանիան մօտենում էր լուսամուտին, դիմացի կենողները աշխատում էին խօսել նրա հետ. նա նայում էր նրանց ապուշ կտրած և տարօրինակ կերպով, չը կարողանալով ոչինչ պատասխանել՝ մինչև նրա մէջքի ետևից երևում էր Մարտիրոսեանը և աննկատելի կերպով ինչ-որ քչփչում էր նրան: Ամուսնու թելադրութեամբ՝ Տանիան պատասխանում էր, բայց դրանից այնպիսի տպաւորութիւն էր ստացվում, թէ նրա ուղեղը չէր մասնակցում խօսակցութեան: Եւ դեռ հենց առաջին ամսից սկսած՝ ամուսինների վարմունքը առիթ էր տալիս հարևաններին քաշվելու և մի այլ տեսակէտից:

«Այսպէս՝ Մարտիրոսեանը և իր կինը—միջանկեալ ասենք, որ կինը սկսեց սովորականից դուրս սնգուրվել—դուրս էին գալիս տնից երեկոյեան ժամը 6-ին: Ապա Մարտիրոսեանը տուն էր վերադառնում մենակ և առաւօտեան ժամը 3-ին կամ 5-ին բերում Տանիային, որը ամեն անգամ սարսափելի տեսք ունէր, կարծես թէ նրան ինչ-որ տեղում ամբողջ գիշերը չարչարել են:

«Երբեմն Տանիան վերադառնում էր մենակ, բայց միշտ էլ նրա դէմքը միևնոյն տանջանքն էր արտայայտում: Մի անգամ հետևեցին և նկատեցին, որ Մարտիրոսեանը Տանիային դուրս բերեց Կուզնեցկի կամուրջի վրա: Սկզբում գնում էին միասին: Յետոյ Մարտիրոսեանը սկսեց յետ մնալ՝ հեռուից ում-որ նկատելով: Տանիային մօտեցաւ գեղեցիկ կերպով հագնված մի տղամարդ, որից յետոյ նրանք գնացին դէպի «Էրմիտաժ»՝ շարունակ ինչ-որ բանի մասին տաք կերպով վիճելով, որ առևտուրի տպաւորութիւն էր թողնում:

«Մարտիրոսեանը հանգիստ կերպով վերադարձաւ տուն:

«— Ա՜խ, եթէ դուք իմանայիք թէ ուր ենք գնում մենք Տանիայի հետ,—ասաց Մարտիրոսեանը մի անգամ տանտիրուհուն: —Հարցրէք Տանիային. Նա ձեզ կասի: Մենք գնում ենք բարեկամների տեսակցութեան տունը: Ուզո՞ւմ էք, գնանք միասին:

«Իսկ հետևեալ օրը Մարտիրոսեանն ասում էր տանտիրուհուն.

«— Հապա մի հարցրէք Տանիային, թէ ուր էր նա երեկ: Ճիշդ է, չէ՞, Տանիա. ուրախ էր, չէ՞, այնտեղ: Մեզանից իւրաքանչիւրն ուրախութիւն էր անում առանձին և իր ուզած ձևով:

«Եւ երևում էր, որ շատ «ուրախութիւն» էին անում, որովհետև երկուսն էլ սոսկալի տեսք ունէին, երբ Մարտիրոսեանը 3-ին, իսկ Տանիան առ. ժամը 5-ին վերադառնում էին տուն:

«Մարտիրոսեանն ինչ-որ առանձին մանիա ունէր, որն արտայայտվում էր նրանում, որ առանձնապէս խնամքով և սիրով էր վերաբերվում իր մօտ ունեցած ածելիներին, որոնց քանակը 7 էր: Նա շարունակ նրանց սրում էր և միշտ հարցնում սրան ու նրան՝ թէ ինչպէս սրել, որ կարելի լինի նրանց շարունակ սուր դրութեան մէջ պահել:

«Մի անգամ, երբ տեղի ունեցաւ առանձնապէս ծանր մի ընտանեկան դրամա, այն է՝ որ Մարտիրոսեանը նորից սաստիկ ծեծել էր կնոջը, նա՝ Մարտիրոսեանը սկսում է բղաւել կնոջ վրա, որ վերջինս թողնէ իրան և գնայ Թիֆլիս. Տանիան դառնում է իր ամուսնուն և իստերիկական տոնով կրկնում.

«— Ես համաձայն եմ ամեն ինչի: Ինչ որ ուզում ես՝ պահանջիր և հրամայիր: Բոլորը կը կատարեմ: Ոչ մի բանի առաջ կանգ չեմ առնի:

«Ամուսինները երկար սպասում էին Տանիայի մօրը: Վերջինս պէտք է գար, և նա եկաւ Թիֆլիսից: Արդեօք, եկած կինը Տանիայի մայրն էր թէ՞ ոչ՝ ասել դժուար է:

«— Նա որտեղից իմ աղջիկն է,—պատասխանեց եկւոր կինը, երբ նրա ուշադրութիւնը հրաւիրեցին դէպի իր աղջիկը տեղի ունեցող վերաբերմունքը:

«Ամուսինների երկիւղը ոստիկանութիւնից մի տեսակ հիւանդագին բնաւորութիւն էր ստացել, և նրանք մի օր յայտնեցին, որ գնում են Թիֆլիս փող բերելու համար: Մի քանի օր պատրաստութիւններ էին տեսնում: Մարտիրոսեանը համարեա թէ ծախեց բոլորը՝ ինչ որ ունէր, այնպէս որ վերջին 3—4 օրը նրանք պառկում էին առանց բարձերի, սաւանների, վերմակների և այլն: Իրանց մօտ թողել էին միայն երկու զամբիւղ: Մարտիրոսեանի մօտ, հաւանօրէն, փող չը կար, որովհետև նա չը կարողացաւ վճարել բնակարանի վարձը, թէպէտ միևնոյն ժամանակ Մարտիրոսեանը շարունակաբար պնդում էր, որ գրպանում այդ րօպէին 300 ր. փող ունի: Որևէ կերպով, ամեն տեսակ անախորժութիւններով և ղալմաղալներով Մարտիրոսեանները ուղևորվում են երկաթուղային կայարան: Իրանց հետ վերցնում են միայն մի հատ զամբիւղ: Միւս զամբիւղը թողնում են տանտիրուհու մօտ:

«Շուտով Մարտիրոսեանների այդ բնակարանն է գալիս ոստիկանութիւնը՝ նայելու թողած զամբիւղը: Այդտեղ պարզվեց, որ Մարտիրոսովը, նա ինքն Մարտիրոսեանց, յայտնի է և այլ ազգանուններով. Նա է՛ Արշակով, է՛ Արշակեանց, է՛ Սարգիսով, և Սարգսեանց, և այլն: Մի խօսքով նա բազմաթիւ անուններ ունէր: Կասկածից դուրս է, որ ոստիկանութիւնը բաւականաչափ փաստեր ունի Մարտիրոսեանցի նկատմամբ՝ բժիշկ Աղամալեանի սպանութեան շուրջը: Եւ մի քանի օրից յետոյ, հաւանօրէն, ոստիկանութիւնը և դատական իշխանութիւնը կը բանան շատ մռայլ բնաւորութիւն ունեցող գործեր:

«Գոնէ, համոզված ասում են այդ այն անձերը, որոնք տեսել են այդ զոյգին:

«Բոլորը հաւատացած են, որ Մարտիրոսեանի կինը շարունակ գտնվելիս է եղել հիպնոսի տակ»:

ԽՕԼԵՐԱ

◆ Թիֆլիսում.—Յուլիսի 27-ի առաւօտ. ժ. 9-ից մինչև յուլիսի 28-ի առաւօտ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 5 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 4 հոգի: Մնում են 38, դուրս են եկել 4, ապաքինվել են 4, մեռել են 3 և մնում են 35:

◆ Յուլիսի 27-ին խօլերային նշաններով հիւանդացել և բարակներն են ուղարկվել. 1) Մադաթեան կղզու վրա Մուխրանսկիի կալուածում՝ Թիւրքահպատակ Փաշաթա Բարսեղեան Սագանեանը, 8 տար.: 2) Դաղըստանսկայա փող. № 6 տանը՝ Թիֆլիսեցի Սոֆիա Ալեքսանդրօվնա Բուրդուլաշվիլին, 25 տար., որը մեռել է: 3) Մետեխսկայա փող. № 42 տանը՝ Բաշինեան գաւառի Սխավա գիւղացի Մելիտոն Նիկոլայէվիչ Նեպարիձէն, 15 տար., որը մեռել է: 4) Մուրավեվսկայա փող. № 10 տանը՝ Թիֆլիսեցի Նիկոլայ Վասիլևվիչ Աֆանասէվ, 58 տար.: Հիւանդացածների բնակարաններում ախտահանութիւն է կատարվել:

◆ Պետերբուրգից «Рав. Ут.»-ին հաղորդում են, որ քաղաքապետ Դրաչևսկին լիազօրութիւններ պիտի տրվեն խօլերայի դէմ կռւելու համար: Այս նպատակով ներքին գործերի մինիստրութիւնը մօտ ժամանակներս կը յատկացնի 500,000 րուբլի: Ինչպէս ասում են, քաղաքագլուխ Գլազունովին իր թոյլ վերաբերմունքի համար կը յայտնվի խիստ յանդիմանութիւն:

27 յուլիսի

Պետերբուրգ.—Գործակալութիւնը ստացել է հետևեալ տեղեկութիւնները խօլերայի մասին. մի շաբաթվայ ընթացքում Աստրախանում և գաւառում հիւանդացել են 288, մեռել՝ 126 հոգի: Մարիուպօլում և շրջակայքում հիւ. 174, մեռել՝ 58, առողջացել են 146 հոգի: Պերմի նահանգում հիւանդացել են 166, մեռել՝ 43 հոգի: Պետերբուրգում հիւանդացել են 100, մեռել՝ 30. բժշկվում են 480 հոգի: Աստրախան է գնացել բժշկական գլխաւոր տեսչի օգնական Շմիդտը խօլերայի դէմ կռւելու համար: Մըշկինում գաւառական սանիտարական կոմիսիան որոշել է բարակներ հիմնել բժշկական բոլոր կէտերում և բերել տալ Պոպօվի «Խօլերայի մասին» կազմած բրօշիւրից 2,000 օրինակ գաւառում տարածելու համար: Օդեսսայում քաղաքապետը փակել է Փոնայի գործարանը, որտեղ խօլերային նոր դէպք է պատահել: Օրէլում նահանգական վարչութիւնը ժողովի է հրաւիրել քաղաքի բժիշկներին խօլերայի դէմ միջոցներ մշակելու համար: Պօլտավայից նահանգական վարչութիւնը ուղարկել է 32 սանիտարական խմբեր դէպի նահանգի զանազան մասերը: Եկատերինօսլաւից հաղորդում են, որ «Русское Слово»-ի № 170-ում ցոյց տրված խօլերայով հիւանդացածների 532 քանակը միայն քաղաքին չէ վերաբերում, այլ ամբողջ նահանգին: (Հ. Գ.)

Բուխարեստ.—Աչքի առաջ ունենալով խօլերայի տարածվելը ներքին գործերի մինիստրը հրամայել է սահմանագծային իշխանութիւններին Ռուսաստան անցնողներին թոյլ տալ անցնել միայն մի օրով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլօվը յուլիսի 27-ին վերադարձել է Թիֆլիս:

◆ Թիֆլիսում վերջին երկու օրերը տեղացին անձրևներ և օդը զովացաւ:

◆ Մեզ հաղորդում են, որ պրօֆ. Մառի պեղումները Անիում բաւականաչափ գաղափար են տալիս քաղաքի գլխաւոր փողոցներից մէկի մասին: Բացված է մի հիւրանոց, որը ըստ երևոյթին ծառայում է եղել դիրք ունեցող հիւրերի համար: Հիւրանոցը վայելուչ է և զարդարված է քանդակներով: Անիի թանգարանը ամեն օր հարստանում է նորանոր իրերով, որոնք հանվում են պեղումների ժամանակ:

◆ Բամբակի այս տարվայ բերքի մասին, թէ Կովկասում և թէ Միջին Ասիայում, գալիս են բարեյաջող տեղեկութիւններ: Տաք եղանակը թացութեան հետ նպաստաւոր չափով նպաստում է բոյսի աճմանը: Նշանաւոր չափով մեծացել են բամբակի ցանքերը առաւել Միջին Ասիայում, որտեղ ցանված կայ մօտ 300,000 դեսեատին:

◆ Թիֆլիսի բօրսային կոմիտէտը միջնորդել է ֆինանսների մինիստրութեան առաջ, որ թոյլ տրվի Թիֆլիսից Թիւրքիա և Պարսկաստան արտահանվող մանուֆակտուրային ապրանքների մաքսային վերահսկողութիւնը կատարել Թիֆլիսում և ոչ սահմանի վրա: Մինիստրութիւնը յարգել է այդ միջնորդութիւնը միայն մի պայմանով, որ Թիֆլիսի վաճառականները իրանց վրա վերցնեն մաքսային կոնտրօլի ծախքերը:

◆ Մեզ հաղորդում են, որ խօլերայի տարածման պատճառով դժուարացել է մի քանի հրահանգիչների գործունէութիւնը գիւղերում: Կաթողիկոսութեան հրահանգիչ Գ. Տէր-Գրիգորեանցը Կաղզուանի գաւառում ստիպված է եղել մուտք չը գործել մի շարք գիւղեր խօլերայի տարածման պատճառով:

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը զբաղված է այժմ ոստիկանութիւնը բարեկարգելու գործով: Մտադրութիւն կայ նախ և առաջ Ռուսաստանի բոլոր կենտրօնական քաղաքներում բաց անել 2 տարվայ դասընթացք ոստիկաններ նախապատրաստելու համար: Այդտեղ կը ծանօթացնեն ծառայել ցանկացողներին բացառապէս ոստիկանական իրաւունքի հետ:

◆ Ներսիսեան դպրոցի նոր շէնքի կառուցման աշխատանքները կանգ են առել ժամանակաւորապէս, շնորհիւ շինարարական մասնաժողովի և կապալառուի միջև ծագած թիւրիմացութիւնների:

◆ Տեղական տնտեսութիւնների գործերով զբաղվող գլխաւոր վարչութիւնը մի յայտագրով առաջարկել է նահանգապետներին տեղեկութիւն տալ ներքին գործերի մինիստրութեան՝ քաղաքային դումների ազգային կազմի և ձայնաւորների ունեցւածքային և կրթական ցէնզերի մասին: Այս տեղեկութիւնները պահանջվում են քաղաքային ընտրողական օրէնքի նոր նախագիծ կազմելու համար:

◆ Մեզ հաղորդում են, որ այս տարի մեղուապահութիւնը շատ աջող է եղել Շիրակում, իսկ անաջող՝ Փամբակում և Դիբեդ գետի հովտում:

◆ Վրաց «Սախալխո գազեթի» լրագրում տպված է Մեծ-Ղարաքիլիսայից՝ տեղում բացված կաթողիկոսութեան ժամանակաւոր դասընթացքների մասին շատ նըպաստաւոր մի յօդուած, որի մէջ յօդուածագիրը, մեծ գովասանքով խօսելով դասընթացքների գլխաւոր ղեկավար Ալ. Քալանթարի մասին, ի միջի այլոց իր գոհունակութիւնն է յայտնում նոյն դասընթացքների մէջ դասախօսող Ալ. Թամամշեանին և Խաչ. Դիլանեանին: Մանրամասնաբար ծանօթացնելով ընթերցողներին դասընթացքների աշխատանքների հետ և ցոյց տալով նրա դրական կողմերը, ի վերջոյ յօդուածագիրը խորհուրդ է տալիս վրացիներին օրինակ վերցնել հարևան հայերից և աճապարանօք հիմնել նմանօրինակ մի հաստատութիւն վրացիների մէջ, որի պակասութիւնը շատ վաղուց է զգացվում, որը որպէս մի կուլտուրական օգտակար հաստատութիւն շատ մեծ դրական արդիւնքներ կարող է տալ:

◆ Մեզ հաղորդում են, որ հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ Բաթումի կարապետ քահ. Մալխասեանցը ենթարկվել է պատժի՝ մեռելը չը թաղելու պատճառով: Մի շաբաթով դադարեցրած են քահանայագործութիւնից. իսկ յետոյ եօթն օր շարունակ պիտի գնայ գերեզմանատուն՝ անքահանայ թաղված հանգուցեալ Արսէնի գերեզմանը օրհնելու:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Քարվանսարա, 22 յուլիսի

Ամսիս 18-ին տեղիս Հ. Բ. Ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ սիրողները ներկայացրին գիւղիս եկ.-ծխ. դպրոցի բեմում առաջին անգամ «Պէպօն» և «Փաստաբանի մօտ»:

Գ. Յարութիւնեանցը Պէպօյի պատասխանատու դերը տարաւ շատ լաւ: Լաւ էին կանանց դերերում տ. Է. Պապեան, օր. Աստղիկ և Անուշ: Միւսները նոյնպէս պահպանեցին անսամբլը: «Փաստաբանի մօտ» վօդէվիլը անցաւ շատ ուրախ:

Երիտասարդ սիրողները մտադիր են մի ներկայացում ևս տալ յօգուտ դպրոցի:

Մուտքը բաւարար էր: Մ.

Շուշի, 21 յուլիսի

Երէկ, ամսիս 20-ին, տեղիս ակումբը՝ մասնակցութեամբ օպերային արտիստ Ա. Կոստանեանի և երգիչ Ն. Ղարաքէշիշեանի՝ տուեց մի համերգ-բալ իր գրադարանի օգտին:

Երեկոն բաղկացած էր երկու բաժնից՝ թւով 14 երգերից և ռոմանսներից:

Ա. Կոստանեան երկու բաժնում երգեց «Что за ночь» Դանկմանի ռոմանսը, «Պաեացի» օպերայից մի արիա, Րուբինշտէյնի «Азра» ռոմանսը, «Այ վարդ» և «Սիրուն գարուն» երգերը: Ղարաքէշիշեանի հետ նա երգեց Crycitix յայտնի դուէտը՝ երաժշտ. Ֆօրի:

Ա. Կոստանեան վաղուց սիրված և յարգված անձն լինելով մեր մէջ, պարզ և բնական է, որ պէտք է ունենար աջողութիւն. և ահա թէ ինչու նրա ամեն մի երգը բուռն ծափերի տարափ առաջացրեց երկսեռ հասարակութեան մէջ, աղմկալից bis-երի տակ նա երգեց իտալական և ուրիշ երգեր ևս։

Երիտասարդ, սկսնակ ույժ է Ղարաքէշիշեանը։ Բացի յիշածս դուէտից՝ նա երգեց «Դոն-Կարլոս» և ուրիշ օպերաներից. հասարակութեան որոտալից ծափերն ու թանգագին ընծան եկան ապացուցելու, որ նա անպայման շնորհալի երգիչ է և մեծ ապագայ ունի։ Նա բաս է, իսկ ներկայումս ուսանում է։

Օր. Ա. Մելիք-Շահնազարեան արտասանեց Մերեժկովսկիի «Сакія-Муни», Նադսոնի «Цвѣтъ» և Վէյնբերգի «Море» ոտանաւորներն այնքան գեղեցիկ և սահուն լեզուով, որ հասարակութեան ուշադրութիւնը գրաւեց։ Ի դէպ ասեմ, որ օր. Մելիք-Շահնազարեան նոր է աւարտել Բագուի գիմնազիան և երբեմն-երբեմն ոտանաւորներ է գետեղում «Баку» լրագրում։

Օր. օր. Մելիք-Շահնազարեան, Ր. Տէր-Ոսկանեան և Ի. Յովհաննիսեան ու պ. Մելիք-Յովսէփեան արտասանեցին Ֆրուգի «Три души» ոտանաւորը, պ. Ր. Բահաթրեան արտասանեց Էդգար Պօէի «Воронъ» պօէմը (ծափ. և ծաղիկների փունջ), օր. Յովհաննիսեան արտասանեց Ապուխտինի «Сумасшедшій» ոտանաւորը (ծափ. և ծաղիկների փունջ), իսկ պ. Մելիք-Յովսէփեան կարդաց Տեմայերի «Любовь» ոտանաւորը։

Մեզ համար նորութիւն էր անգլիական «Ջիգի-ջիգի» պարը, որ պարեց Ս. Գէորգեան և «օյրա-օյրա» ֆրանսիական կօմիքական պարը, որ պարեցին Ս. Գէորգեան և օր. ***։ Հասարակութիւնն այնքան հաւանեց այդ պարերը, որ կրկնել տուեց որոտալից ծափերի և bis-երի տակ։

Համերգից յետոյ սկսվեց պարահանդէսը, որ տևեց մինչև գիշերվայ ժամը 3-ը։ Նուագում էին Սունժենսկի-Վլադիկավկազեան գնդի օրկեստրը և սազանդարը։

Ժողովարանի դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր երկսեռ հասարակութեամբ։

Ոսկու. Զօն

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հռչակաւոր ջութակար և կօմպօզիտոր Պադերևսկին հիւանդացել է վերջերս լուրջ կերպով։ Բժիշկները նրան արգելել են մի տարվայ ընթացքում աշխատելը։

◆ Սէն Սանսը աւարտեց մի նոր օպէրա «Դէժանիր» անունով, որը շուտով կը խաղացվի Մօնտէ-Կարլօյում, իսկ ապա Պարիզի Grande Opèra-ում։

◆ Աշխարհահռչակ բէժիսսեօր Հէնրիխ Կոդէլբերգը վախճանվել է։ Նա տառապելիս է եղել սրտի հիւանդութեամբ։

◆ Հաուպտմանը վերջերս սկսել է շատ յոռետես մտքեր յայտնել գեղարուեստական թատրոնի նկատմամբ։ Նրա կարծիքով՝ շատ շուտով գեղարուեստական թատրոնը կունենայ իր տխուր և ողբերգական վախճանը։

◆ Ուկրայինցիների թատրոնական գործի հիմնադիր և մեկենաս Կրապօվնիցկիի գերեզմանի վրա արձան կանգնեցնելու համար շարունակվում է հանգանակութիւնը։ Արձանը կը կանգնեցվի Կիէվում։

◆ Վրաց թատրոնում ներկայ սէզօնում խաղալու է տաղանդաւոր դերասան Բ. Մդիվանին, որը վերջերս յայտնի դարձաւ։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յովհաննէս Մալխասեան. «Մեր բարեկամները», Թիֆլիս 1910 թ., գինն է 15 կօպ.։

Փոքրադիր 48 երեսից բաղկացած ներկայ գրքոյկի մէջ գետեղված են 4 պատմուածքներ, վերցված գիւղական կեանքից։

Պատմուածքների մէջ դեր են խաղում անասունները՝ հաւերը, ճուտերը, շունը, ձին, որոնք և կոչված են «մեր բարեկամները»։

Այն դէպքերը, որոնք պատմված են, բնորոշ են, հետաքրքրական և ցոլացնում են գիւղական աշխարհի տրամադրութիւններ։ Կան սրտառուչ, տպաւորիչ կտորներ։ Սակայն միատեսակ չեն պատմուածքի մասերը իրանց զարգացմամբ. տեղ-տեղ ձգձգված են զուր տեղը և թուլացված։

Պատմուածքների սկզբնաւորութիւնները ծանր են ընթերցանութեան համար, բացի վերջին պատմուածքից, որի սկիզբը և վերջը գրաւիչ են, իսկ միջին մասը թուլացնող տպաւորութեամբ։

Անհոգութեան պէտք է վերագրել այնպիսի սխալներ, ինչպէս են՝ «իջցրեց» փոխանակ «իջեցրեց» (երես 31), «հաւկթներ» (6), վերջաւորութիւնները(оконечности)(20), «մօրերու» փոխանակ «մայրերի» (32), «խանգարի նրան» (26), համակվեցայ և լցվեցի (47), կամ նախադասութիւններ՝ «ձեռով գալու նշան էր անում» (5), «իշխին, երբ երեկոները արօտից գալիս էր գիւղ, ես գնում էի» (46), «նրա անասուններից որը սատկեց, որը պարտքի տեղ տարան, մնացին միայն մի երկու թև հաւը և Օսկին նալլայի կճախը դարձած ձկաձեւը» (41), «Բօզարը մէկ մէկի չորերն էր պատառոտում, մէկ միւսին կծոտում» (22), և այլն։

Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարսբազ, 21 յուլիսի

«Մշակի» 139-դ համարում տպված է իմ անունով մի բաց նամակ, որի մէջ շօշափվում է հանգուցեալ Յովսէփ Կուսիկեանցի կտակի խնդիրը։ Որովհետև կտակը հասարակական բնոյթ ունի, ես պարտք եմ համարում մի քանի տեղեկութիւններ տալ նրա մասին. միայն զարմանում եմ, որ հանգուցեալի կտակակատարները մինչև օրս չեն արել այդ՝ թէ Արմաւիրի գիւղական համայնքի, թէ հայ հասարակութեան լայն խաւերի նկատմամբ։

Յովսէփ Կուսիկեանը կտակել է բնիկ չքաւոր արմաւիրցիների զաւակների ուսման համար երկու տուն 21,000 ր. արժողութեամբ (այդպէս է գնահատել ինքը հանգուցեալը)։ Հանգուցեալի այրի տ. Ե. Կուսիկեանը պէտք է յանձնէր երկու տարվայ միջոցում կամ այդ երկու տունը կամ նրանց որոշված արժէքը (21,000 ր.) կտակակատար Սիմէօն Գասպարեանցին (այժմ վախճանված) և Բարսեղ Կուսիկեանցին, որոնք, շահեցնելով այդ գումարը՝ պիտի հասցնեն նրան 80,000-ի և ապա յանձնեն Լազարեան ճեմարանին՝ թոշակներ կազմելու արմաւիրցի չքաւոր տղաների համար։ Կտակված գումարի կանոնաւոր աճեցման և պահպանման հսկողութիւնը կտակարարը յանձնում է Արմաւիրի գիւղական վարչութեանը, իր կնոջը և ինձ, իբրև իր մերձաւոր ազգականի։ Ահա կտակի էական մասը։

Ինչ վերաբերում է գումարի վիճակին՝ ես չեմ կարող հաղորդել ոչ մի տեղեկութիւն, որովհետև մինչև օրս չունեմ հաշիւ կտակակատար Բարսեղ Կուսիկեանից։ Անցեալ տարի ես պաշտօնական թուղթ եմ գրել այդ մասին Արմաւիրի գիւղապետ Այվազեանին և դարձրել նրա ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ գիւղական վարչութիւնը և շահագրգռված է և պարտաւոր է հետևել կտակված գումարի կանոնաւոր աճեցման և պահպանման, սակայն չունեմ ոչ մի պատասխան։

Իսկ Լազարեան ճեմարանը ստացել է 4 տարի առաջ կտակի պատճէնը, բայց ոչ կտակակատարներից, այլ Նահանգական դատարանից։ Պէտք է կարծել, որ Արմաւիրի գիւղական վարչութիւնը պարտք կը համարի հետևել բարեգործական գումարի կանոնաւոր հաշուետուութեան և կտակարարի կամքի անշեղ կատարման։

Կ. Կուսիկեանց

Թիֆլիս, 26 յուլիսի

1908 թւի փետրվար ամսին Օրդուբաթցի Կարապետ Ազամեանցը ունենալով իր մօր կողմից լիազօրութիւն՝ խոստացաւ տալ նոյն քաղաքի ս. Ստեփաննոս եկեղեցուն իր հանգուցեալ հօր խոստացած մօտ 1500 ր. արժողութեամբ կալուածքը միայն այն պայմանով, որ նրանից ստացված արդիւնքը գործադրվի Օրդուբաթում բացվելիք հայոց դպրոցի վրա։ Այս մասին 1908 թ. փետրվարին տպվել է «Մշակում»։ Ի՞նչ ասել կուզի, որ հասարակութիւնը, ի դէմս երէցփոխ Գալուստ Գրիգորեանի, շնորհակալութեամբ ընդունեց այդ նուէրը։

Կազմվեց արձանագրութիւն, որոշվեց ամեն տարի մարտի 18-ին պատարագով և հոգեհանգիստով յիշատակել հանգուցեալի բարեգործութիւնը և նրա մեծադիր պատկերը կախել դպրոցի դահլիճում։

Գրվեցին նոտարական կարգով թղթեր, որոնցով պարտէզը յանձնվեց Գ. Գրիգորեանին, իբրև եկեղեցու երէցփոխի, այն պայմանով, որ մինչև հինգ տարի՝ ինքը Կ. Ազամեանը պարտաւոր լինի օրինական կարգով բոլորովին հաստատել տալ և յանձնել կալուածքը յիշեալ եկեղեցուն։

Այժմ, երբ ժառանգութեան հարցը պաշտօնական շրջաններում աւարտվեց, Կ. Ազամեանը ամսիս 24-ին առանձին գրութեամբ դիմեց երէցփոխ Գ. Գրիգորեանին, յայտնեց իր պատրաստակամութիւնը՝ կատարել 1908 ի փետր. տուած խոստումը։

Ուրախալի երևոյթ է, որ մի երիտասարդ, մոռանալով իր անձնական շահը, բարեյօժար կամքով. գալիս է կատարելու մի բարոյական պարտք՝ լրացնելու իր հանգուցեալ հօր բերանացի արած խոստումը։

Յուսով ենք, որ Օրդուբաթի հայոց եկեղեցու երէցփոխ Գ. Գրիգորեանը չի յապաղի հետևել, որ օր առաջ հաստատել տայ կարևոր թղթերն ու կալուածքը անցնել տայ ս. Ստեփաննոս եկեղեցուն պատկանող հողերի ցուցակում և նրան, հանգիստ սրտով շահագործելով, Օրդուբաթում բացվելիք հայոց ծխ. ուսումնարանի համար մի անսպառ աղբիւր դարձնի։

Ն. Սիմէօնեանց

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Մ. Մ. Սարուխանեանցին

«Մշակի» 152-դ և 153-դ №№-ում տպված է ձեր մի ընդարձակ բացատրութիւնը «Իմ խօսքը» խորագրով, որի առաջին մասի առիթով ասելիքս թողնելով վերջում, ես ուղիղ կը դիմեմ էական նպատակին, այն է՝ Ելլախ-Շուշի երկաթուղուն։

Դրա առիթով տպված թղթակցութիւններից և ոչ մէկի նպատակը գործը խանգարելը չէ եղել, այլ ընդհակառակը բոլորն էլ դէպի այդ գործը լցված են եղել համակրանքով։ Նրանց միակ նպատակը եղել է պարզել, թէ ուր պիտի գնան և ինչպէս մախվեն չարքաշ գիւղացու ու բանւորի դառն քրտինքով աշխատած կոպէկները։

Մամուլը և նրա մէջ ձայն բարձրացնողները պարտաւոր են արթուն հսկել հասարակաց շահերին և նրանց սպառնացող փտանների առաջն առնել։ Ահա հէնց այդ նպատակով էլ գրվում և լոյս են տեսնում այդ թղթակցութիւնները։ Նրանք եղել են հասարակութեան ձայնի արձագանքները։

Պարոն Սարուխանեան, ընդունելով որ ձեր գրածները անկեղծ են, գումարեցէք Սարուխանովօ-Կուբինսկի Ակցիօներական Ընկերութեան ընդհանուր ժողով, ձայների մեծամասնութեամբ վճիռ կայացրէք թէ՝ ընկերութիւնը ինքը չը պիտի ձեռնարկէ երկաթուղու կառուցմանը, այլ պարտաւոր է այդ գործը առանձնացնել իր ընդհանուր ձեռնարկութիւններից և ստանալով իր մրցախած 30—35,000 ր. մի կողմ կանգնել և երկաթուղու գործը յանձնել ակցիաներ գնող հասարակութեան ձեռքը։ Կազմեցէք այդ առիթով արձանագրութիւն և նրա նոտարի ձեռամբ հաստատված պատճէնը ուղարկեցէք «Մշակի» խմբագրութեանը, նրան լոյս ընծայելու, և հաւատացէք, որ ակցիաները մի ամսվայ ընթացքում մինչև վերջին հատը վաճառված կը լինեն։

Այս է միակ միջոցը. կապիտալիստները գործնական մարդիկ են, նաև գիւղացին և բանւորը։

Մի մոռացէք նաև ձեր ընկերութեան ընդհանուր ժողովի իրաւասութիւնը. նա միանգամայն կարող է հրաժարվել ձեր խոստումները կատարելուց։ Առարկում են, թէ ինչո՞ւ դուք շատ էք ձեզանով զբաղեցրել հասարակութեանը և ձեր բոլոր առևտրական ձեռնարկութիւնները կապել բարեգործութեան հետ և ի զուր, որովհետև ոչ ոք չի հաւատայ, թէ վաճառականի ձեռնարկած գործերը ոչ թէ իր անձնական շահերին ծառայեցնելու համար են, այլ բարեգործութեան։ Հասարակութեանը այս դէպքում հետաքրքրողը միակ Ելլախ-Շուշի երկաթուղու գործն է, որի մասին և պէտք է պարզ և որոշ խօսել։

Եթէ ցանկանում էք բոլոր աննպաստ կարծիքներին վերջ տալ և եթէ ցանկանում էք հայրենի երկրին ծառայութիւն մատուցանել, ընդունեցէք վերև գրածս առաջարկութիւնը և հաւատացէք, որ այնուհետև ոչ մի նախանձութիւն չէ կարող նսեմացնել ձեր անուան հետ կապվելիք յաւիտենական փառքի փայլը։

Գիւղացի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

I

Դէպի գիւղ

Բաղդի բերմամբ ես ապրում եմ այժմ շվէյցարական Leysin-village կոչված գիւղի մէջ։

Սարի գագաթին է այս գիւղը, մօտ 5000 ֆուտ բարձրութեան վրա։ Կանաչ դաշտերը լի անուշահոտ ծաղիկներով՝ վերջանում են վայելչակազմ եղևնիների ու սոճիների անտառներով. դիմացդ էլ վեհ, ձիւնապատ Ալպերը։ Օդը մեղմ, մաքուր...

Այո, գեղեցիկ է գիւղը և գրաւում է մարդուն իր գեղեցկութեամբ, բայց աւելի ես զարմացնում է իր բարեկարգութեամբ։ Էլեքտրական երկաթուղի, կառքի ճանապարհ, հեռագրատուն, հեռախօս, օրական 4 անգամ պօստ, գեղեցիկ ուսումնարան, երկյարկանի տներ, անթիւ հիւրանոցներ և պանսիօններ, էլեքտրական լոյս և այլն՝ բոլորովին մոռացնել են տալիս, որ գիւղումն ես գտնվում։

Այս առաջին անգամը չէ, որ ապրում եմ շվէյցարական գիւղում, և կարող եմ ասել, որ շատ քիչ բացառութեամբ բոլորն էլ սրա նման են։ Ակամայից ես համեմատում եմ մեր գիւղերի հետ և սիրտս կըսկծում է։ Մանաւանդ այսօր, կարդալով «Մշակի» № 148-ի մէջ Աթանասեանի յօդուածը՝ աւելի ես տխրեցի։ Մինչև երբ, մինչև երբ մեր գիւղը պէտք է մնայ անբարեկարգ, կեղտոտ, նահապետական տնտեսութեամբ։ Մինչև երբ մեր գիւղացին պէտք է մնայ տգէտ և սնապաշտ։

Երկար մտածելով այդ հարցի մասին, ես պատասխանում եմ Աթանասեան՝ին՝ մինչեւ որ մենք կը սովորենք սիրել եւ հասկանալ մեր գիւղացուն։ Ես չեմ ժխտում, որ դրամական օգնութիւնը մեծ դեր կարող է կատարել մեր գիւղերի բարեկարգութեան հարցում, բայց փողը չէ միակ շարժիչ զօրութիւնը։ Փողից աւելի սէր եւ ցանկութիւն է հարկաւոր գործը առաջ տանելու համար։ Պ. Աթանասեան, անհատների ճիգերով ստեղծված գործը խախուտ է, նա չէ լինում յարատև։ Մեռնում է անհատը, կամ դադարում է գործելուց, և ամեն բան քանդվում է նորից։

Ոչ, հարկաւոր է որ ամենքը ներշնչված լինեն նոյն գաղափարով, որ ամենքը հասկանան, որ մեր գիւղացիութեան բարեկեցութեան մէջն է մեր ապագայ երջանկութիւնը։ Այսօր մեր քաղաքները լի են հարիւրաւոր երիտասարդներով, որոնք դուրս են եկել նոյն այդ գիւղից, ուսում են ստացել, իրանց համար դիրք են ստեղծել և... և նրանք ամեն կերպ աշխատում են մոռանալ իրանց ծագումը, նոյն իսկ ամաչելով դրանից։ Բայց մի՞թէ հասկացող մարդը կամաչէր դրանից. մի՞թէ նա, ընդհակառակն, չէր պարծենայ, որ ոչնչից բան է դառել, և չէր աշխատի իր հայրենակիցներին էլ դուրս բերել լոյս աշխարհ։ Կեղծ ամօթխածութիւն, կեղծ հասկացողութիւն։

Դէպի գիւղ, ահա թէ ինչին պէտք է ձգտեն մեր երիտասարդները։ Դէպի գիւղ, ահա թէ ուր պէտք է տեղափոխեն իրանց գործունէութիւնը մեր բարեգործական հիմնարկութիւնները։ Հետևեալ նամակումս կաշխատեմ պարզել, թէ իմ տեսակէտից ինչ մեծ դեր կարող է կատարել մեր Կովկ. Հ. Բ. Ընկերութիւնը իր ճիւղերով գիւղի վերածնութեան գործում։

Իշխ. Մ. Թումանեան

Leysin, 31/18 յուլիսի

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 յուլիսի

ՎԻԷՆՆԱ։ «Կօր.-Բիւրօյին» հեռագրում են Կրակօվից, որ փողոցի վրա ատրճանակի երեք հարուածով սպանվեց ժողովրդական դպրոցների լեհական ընկերութեան մէջ ծառայող ձկնորսը։ Սպանողը, որը անուանեց իրան Տառուզվասկի՝ Վարշավայից, բռնվեց և հարց ու փորձի ժամանակ ցոյց տուեց, որ սպանել է ձկնորսին իր կուսակցութեան յանձնարարութեամբ։

ԼՈՆԴՈՆ։ Այստեղ հեռագրում են Նիւ-Եօրկից, որ դերձակների համքարութեան գործադուլ արած բանւորների թիւր 90,000-ի է հասնում։

ՔԻՇԻՆԷՎ։ Տելենէշտում սպանվել են երիտասարդ ամուսիններ Ֆլօրին։ Սպանութեան պատճառները դեռ ևս չեն պարզվել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 1 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ. Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 9 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար № 74/75 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ.. Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր՝ երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Արագ № գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № 7/8 8 ժ. 28 ր. առ. Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժօմ 2 ժ. 3 ր. ցեր.։ Մարդատար № 9/10 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պօստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № 9/10 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № 7/8 6 ժ. 28 ր. առաւ.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ
Փոխադրվեց Միքայէլեան փողոց № 31, տ. Խրխրեանցի։
Ընդունելութիւնը { առ. 8 — 11 ժ. / եր. 4 — 7 ժ.
(Հ. 2.) 875. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кв. Гирей.
(Ե. Հ. Կ.) 565. 0—31

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Արաս-Արաղսկայա, տուն Միրիմանովի։
(Ե. Հ. Կ.) 725. 100—20

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (сиринцов.), վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втиранie) ևայլն։ Էլեկտրականութիւն ռէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Խորհուրդը 50 կօպ.։ Ընդունելութիւնը՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½-4½ ժ.։ Семеновская ул.. № 9.
(Կ. Հ.) 77. 50—47

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КРЕМЪ НЕЛЛИ
NELLY'S CREAM.
Англійская аристократія предпочитаетъ всѣмъ другимъ средствамъ именно „Кремъ Нелли“, какъ лучшее для смягченія кожи лица, рукъ и бюста. Въ Лондонѣ расходится до 1.000.000 бан. ежегодно.
Кремъ Нелли уничтожаетъ всѣ недостатки кожи, загаръ, веснушки, пятна и т. п.
Продажа у Мюръ и Мерилизъ, Гетлингъ, Акц. О-ва К. Эрмансъ и Ко и пр., а также во всѣхъ апт. и парфюмерн. магаз. Россіи.
Одной банки достаточно, чтобы убѣдиться въ его поразительномъ дѣйствіи.
Цѣна 1 р. 25 к. и 2 р. 25 к.
Въ провинцію налож. платежемъ на 50 к. дороже.
Для всей Россіи единств. складъ
МОСКВА, Пречистенка, Б. Власьевскій пер., д. 3.
(M.130700) 423. 40—13

Լոյս տեսաւ
„ՓԱՐՈՍ“
Գրական-գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթի № 1.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
1) Խմբագրութեան կողմից, 2) Փարոսը՝ պատմ. Վ. Թումանեանի, 3) Գարուն՝ բան. Ա. Ջանեանի, 4) Տառապանքի ծնունդը՝ Խ. Շարնգի, 5) Մի յուսահատվիր՝ բան. Ե. Ժամհարեանի, 6) Ես նրան տեսայ՝ բան. Գ. Շանթուրեանի, 7) Կեանքի իմաստը՝ արևելեան. Գ. Շանթուրեանի, 8) *** բան. Ար-օի, 9) Կենդանի թաղվածը՝ պատմ. Ս. Ալլերնիցի, թարգմ. Գ. Ծովեանեանի, 10) Nouve Romantique—մինիատիւրա Պ. Ալտենբերգի, թարգմ. Կ. Զալաբի, 11) Յովհաննէս Այվազովսկի, 12) Կեանքի շուրջը, 13) Յայտարարութիւններ։
ՊԱՏԿԵՐՆԵՐ
1) Մեֆիստոֆել՝ Անտօկոլսկու, 2) Իններորդ ալիք՝ Այվազովսկու, 3) Քրիստոս պատերազմի դաշտում՝ Դանգերի, 4) Բ. Բիերնսօն, 5) Յ. Այվազովսկի, 6) Նիւթեր ունեցող հեղինակների պատկերները։
Առաջին համարի գինն է 15 կօպ., պօստի ծախքով 20 կօպ.։
Խմբագրութեան հասցէն՝ Баку, редакція журнала „Фаросъ“. 874. 1—1

Վերին Ագուլիսի եկեղեցական ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
Մի գիմնազիաւարտ փորձված
ՎԱՐԺՈՒՀԻ,
որ աւանդելու է 10 դաս. ձեռագործութիւն, 5 դաս նկարչութիւն, 2 դաս ռուսաց պատմութիւն և ռուսախօս վերակացութիւն օրիորդաց բաժնում։
Պայմանների մասին դիմել Վերին Ագուլիս՝ հոգաբարձութեան։
(Օ. Մ.) 877. 3—1

Նոր լոյս տեսաւ
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու
Ա. և Բ. տարիների դասընթացք։
Թիֆլիս, 1910 ԳԻՆԸ 30 Կ.
Պահեստը «Գիր» գրավաճառանոցում (Վելիամինօվսկայա փ., տ. № 7)։ Գրավաճառներին 20% զեղչ։
(Հ.) 869. 1—1

ՏԱՐԱԾ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՒՄԱՐՆԵՐ
75.000, 40.000, 20.000, 15.000, 10.000 ԵՒ ՈՒՐԻՇ.
ԿԱՌԱՎԱՐՉ. ԴՐԱՄԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ բաժանված ՀԻՆԳ կարգի, որ խաղացվում է Վարշավայի Պետական բանկում։
ՎԻՃԱԿԱԽԱՂԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹ.
մասնաւոր անձերին անմիջականապէս տոմս չէ ծախում։
Տոմսերի վաճառումը կատարվում է լիազոր-կօլլէկտօրների միջոցով։
Պօստային և վիճակահան. աղիւսակների ուղարկելու ծախսերը բանկի հաշւին։
Տարած գումարները վճարում ենք իսկոյն՝ տոմս ներկայացրած օրը։
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ՝
I կարգ. յուլիսի 27-ին և 28-ին 1910 թ.
II » օգոստ. 27-ին և 28-ին 1910 թ.
(հին տոմարով)
Банкирскій Домъ
ВАРШАВА, БРАТСКАЯ 18.
I կամ II կարգերին մասնակցելու գներ.
(առանց իրաւունքի մասնակցելու միւս կարգերին)
ա) ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ տոմսի արժէքը՝ տանելու դէպքում.
Ամբողջ տոմսը 8 ր. ½ տոմսը 4 ր., ¼ տոմսը 2 ր.։
բ) ԱՌԱՆՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ տոմսի արժ.՝ տանելու դէպքում.
Ամբողջ կամ 4/4 տ. 10 ր., ½ տ. 5 ր., ¼ տ. 2 ր. 50 կ.
1/10 տասն ամբողջ տոմսերի . . . . 10 ր. — „
1/20 „ „ „ . . . . 5 ր. — „
ԲՈԼՈՐ 5 ԿԱՐԳԵՐԻ ՓԱՅԵՐԸ. 1/5 մ. տոմսի 19 ր. 60 կ.
Ընդունվում է մասնավճարով 1/10 „ „ 10 ր. — „
կէսը պատուիրելուց, կէսը 1/20 „ „ 5 ր. — „
Նոյեմբերին։
Մինչև 5 ր.-գումարը կարելի է ուղ. պօստային մարկաներով։
Л. В. ЛАНДАУ и Ко.
Հասցէ հեռ. համար.
„ВАРШАВА ЛАНДАУБАНКЪ“
(Ա. Օ.) (B. 42738) 750. 3—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.